Եկեղեցին և Իր Վիճակը

Այս առավոտ աղոթքի մեջ հատկապես հիշենք հազվագյուտ հանդիպող մանկական այդ հիվանդությունը, դրա համար մենք, անշուշտ, ուզում ենք, որ բոլորն աղոթեն: Բժիշկներին է անգամ դա անհայտ: Նրանք ինչ-որ անուն են դրան տալիս, բայց ես կարծում եմ, որ նրանք պարզապես անուն են տվել, նրանք, նրանք չգիտեին, թե ինչ է դա: Եվ...բայց Քրիստոսը գիտի, թե ինչ է դա: Ես կարող եմ ասել, թե ինչ է դա, դա դևն է, այո, դևն է: Թե ինչ անուն են նրանք ուզում դրան տալ, դա իրենց գործն է, բայց ահա թե ինչ է դա՝ չար հոգին, հասկանում եք: Այժմ եկե՛ք բոլորս միասին, բոլորս միասին երգենք՝ *Միայն հավատա,* բոլորդ միացե՛ք:

Միայն հավատա, միայն հավատա,
Չկա մի բան անհնարին, միայն հավատա,
Միայն հավատա, միայն հավատա,
Չկա մի բան անհնարին, միայն...

2 Տերը կբժշկի ձեզ, քույր: Եկե՛ք հիմա բոլորս միասին աղոթենք այս աղջկա համար, մինչ խոնարհում ենք մեր գլուխները:

3 Մեր Երկնայի՛ն Հայր, ես ուղղակի չեմ կարողանում դա մտքիցս հանել: Այս փոքրիկ աղջիկն այնտեղ, որ մահանում է, ինչ-որ մեկի սիրելին է: Նա քո ստեղծագործությունն է, իսկ սատանան փորձում է խլել նրա երիտասարդ կյանքը: Խնդրում եմ Քրիստոսի Անունով, որ բռնես մահվան ձեռքը, և հետ մղես թշնամուն: Դու այն Տեր ես, Ով կարող է Կարմիր ծովի ջրերը երկու կողմերից որպես պատնեշ կանգնեցնել, և Իսրայելի զավակներին՝ Քո ժառանգությանը, ծովի միջով ապահով անցկացնել Ավետյաց երկիր: Ո՛վ Աստված, այսօր մենք խնդրում ենք, որ Դու վերացնես բոլոր խոչընդոտները և թույլ տաս այս երեխային ապրել: Մեզ վիճակված է եղել խնդրելու և որպես Քեզ հավատացող մարդկանց մի խումբ, խնդրում ենք այս երեխայի բժշկության համար Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն:

4 Այսօր ես, ես կրկին երախտապարտ սրտով եկել եմ

ձեզ մոտ Տեր Հիսուսի Անունով: Ես մի փոքր շուտ եմ վերադարձել Լուիզիանայից: Մտածում էի, եթե մինչև կիրակի այստեղ լինեմ, գուցե կարողանամ կիրակնօրյա դասընթաց անցկացնել: Բացի այդ, այնքան սարսափելի շոգ էր այնտեղ, որ մենք...բարեխառն և զով եղանակ կլինի այս առավոտ Լուիզիանայից այն կողմ: Նման շինությունում առանց օդափոխիչ անհնար է նստել, Լուիզիանայում առանց օդափոխիչ ուղղակի ուշագնաց կարող ես լինել:

5 Եվ այսպիսով, ես եկել եմ, որպեսզի հաջորդ շաբաթ Հյուսիսային Սասկաչևան, որն այնտեղ՝ Արքայազն Ալբերտի մոտ է, մեկնելուց առաջ կարողանամ երկու–երեք օր հանգստանալ: Եվ դա քանի դեռ ճանապարհներ կան, մի կողմից: Ողջ երկիրը անցնում ես առանց որևէ ճանապարհի, և այնտեղ, ուր մենք գնում ենք բացի հնդիկներից և էսկիմոսներից ոչ ոք չկա: Այդ հավաքույթին բազմաթիվ մարդիկ են լինելու ողջ Կանադայից: Ասում են նրանցից որոշները գալու են Արևմտյան ափից: Եվ ես, իհարկե, ցանկանում եմ, որ դուք աղոթեք, որպեսզի այնտեղ Աստված հանդիպի մեզ հետ և չափազանց հզոր հավաքույթ շնորհի Իր փառքի համար: Արդեն անցել է չորս կամ հինգ տարի, ինչ եղել եմ Կանադայում: Հրաշալի ընկերներ ունեմ այնտեղ, շատ լավ մարդիկ են

6 և նրանք հավատարմորեն հաճախում են եկեղեցի: Կարևոր չէ, թե որքան ցուրտ եղանակ է, նրանք փաթաթվում են ծածկոցներով, նստում սահնակի վրա, քշում ձիերը երեսուն մղոն՝ եկեղեցի հասնելու համար: Նրանք բոլորը՝ լինի մեծ կամ երեխա, անցնում են ծյունաթմբերի և նման բաների միջով: Բոլորը հավաքվում են միասին: Մի ընտանիքը հասնում է մյուսին, նրանք միասին հավաքվում և գնում են: Զոհողության շնորհիվ է, որ նրանք այդքան շատ բան են ստանում ծառայությունից: Որտեղ չկա զոհողություն, չկա հզոր ծառայություն: Դուք իրոք պետք է ցածրանաք և այնպիսի մի բան անեք, որը ցավ է պատճառում, պետք է որոշ բաները մի կողմ դնեք, դադարեցնեք աշխատանքը, *այս* կամ *այն* բանն անեք՝ եկեղեցի գնալու համար և ցույց տաք Աստծուն, որ սիրում եք Նրան, զոհողության եք գնում, այդ ժամանակ է, որ ինչ–որ բան կստանաք ծառայությունից:

7 Դա նույն բան է, ինչ իմ երեխաների հետ է: Բիլլի Փոլը, կարծում եմ ես...երբ ես երեխա էի, ոչինչ չունեի:

Մայրիկը սովորություն ուներ մի տուփ կոնֆետ բերելու և ամեն մեկիս երկու-երեք հատ բաժանելու: Սուրբ Ծննդյան տոներին պատահում էր, որ փոքրիկ եղջյուր կամ խաղալիք ատրճանակ կամ ինչ-որ նման մի բան էինք նվեր ստանում: Եվ ես տեսնում էի ուրիշ երեխաների սահնակներով և հեծանիվներով, լավ հագուստներով և տաք բաճկոններով: Եվ ես, ես այնքան վատ էի ինձ զգում, որ ասացի. «Եթե ես երբևիցե իմ սեփական երեխաներն ունենամ, ես ամեն հնարավոր բան կանեմ նրանց համար»: Ես պատրաստ կլինեմ սոված ման գալ, բայց իմ երեխաները պետք է մի բան ստանան: Եվ երբ ես ապրում էի...Երբ Բիլլը դեռ փոքր տղա էր, ես նրա համար փոքրիկ եռանիվ հեծանիվ ձեռք բերեցի, ես նրա համար ամեն բան պատրաստ էի ձեռք բերել: Մեդան էլ էր ջանում ամեն բան անել, զոհաբերում էր իր հագուստը, որ նրա համար մի բան ձեռք բերեր: Բայց գիտե՞ք, թե մենք ինչ սկսեցինք նկատել: Ես նրան եռանիվ հեծանիվ, փոքրիկ նետ ու աղեղ և նման բաներ էի տվել, բայց նրան գտա բակում գդալով թե փայտիկով ինչ-որ տեղ փորելիս: Տեսնո՞ւմ եք: Ես ասացի. «Մյուսները այդպիսին չեն լինի»: Տեսնո՞ւմ եք: Տուր մարդու ձեռքը ամեն ինչ և նա այլևս ցանկություն չի ունենա: Հարկավոր է ինչ-որ բան զոհաբերել:

8 Այդպես է նաև փրկության հարցում: Դա լիակատար զոհողություն է: Այո՛, եղբայր Ռոյ: Սա, սա զոհաբերություն է, որը դու ամեն օր պետք է անես, մի բան, ինչը կմոտեցնի Աստծուն: Ես գիտեմ, որ ձեզ համար ամբողջ առավոտ այս տոթ շենքի մեջ նստելը, զոհողություն է: Մինչ մենք նստած ենք այստեղ, եկե՛ք մեր հայացքները պահենք ամենափառավոր Զոհին, երբևէ զոհաբերված՝ Հիսուն Քրիստոսին, երբ Նա պետք է գար այս երկիր մեր փոխարեն մեռնելու համար: Եվ ոչ միայն դա, այլ Իր Հոգին իջավ դժոխք ու մնաց այնտեղ երեք օր ու երեք գիշեր, և երրորդ օրը հարություն առավ, բարձրացավ վերև, նստեց Աստծո աջ կողմում՝ Երկնքում, բարեխոսելով մեզ համար, մեզ տրված Նրա փրկագնման և շնորհքի դավանության հիման վրա:

9 Եվ այնտեղ...այնտեղ, ուր գնալու ենք, իրականում շատ աղքատ մարդիկ կան, նրանք ստիպված կլինեն վաճառել կովերից մեկը կամ ոչխարներից երկու-երեքը կամ մեկ այլ բան, հավաքույթին գալու համար: Գուցե ծեր էսկիմոսը մորթիներից մի քանիսը վաճառի, որոնց

կարիքն իր ընտանիքն իրոք ունի, որպեսզի կարողանա գալ: Հնդկացի առևտրականն էլ ստիպված կլինի նույնն անել: Հիմա գոնե կարող ենք աղոթել այդ մարդկանց համար, այդպես չէ՞: Եվ մենք խնդրում ենք, որ Աստված նրանց ինչ-որ հզոր մի բան պարգևի:

10 Հիմա, շոգ է, ես չեմ ուզում ձեզ երկար պահել: Եվ ես ուզում եմ այս առավոտ, նախքան հիվանդների համար աղոթելը, մենք լրջորեն խոսենք *«Եկեղեցու և իի վիճակի»* մասին: Մի քանի օր առաջ Լուիզիանայի Ծրիվպորտ քաղաքում ինձ տրվեց այս Պատգամը, որն ուղղված էր եկեղեցուն, և ես, ես կարծում եմ, որ դա եկեղեցու վիճակն է: Եվ մենք այս առավոտ պատրաստվում ենք կանգնել Աստծո առջև և աղոթել ու խնդրել Նրան, որ օգնի մեզ: Չձգտենք նույն մոտեցմանը, այլ խնդրենք Աստծուն, որ օգնի մեզ այս օրում, որում ապրում ենք: Եվ նախքան... Սա փառահեղ հին Աստվածաշունչ է, բայց հավիտենական կյանքի բովանդակությունն այնտեղ է պարունակվում է:

11 Եվ հիշե՛ք, Խոսքն Աստված է, Աստված ոչ այլ բան է, քան Իր Խոսքը: Եվ մենք ոչ այլ բան ենք, քան մեր խոսքը, և եթե մենք անում ենք...Իհարկե մեր մոտ այլ կերպ է, մենք կարող եք, մենք կարող ենք ասել. «Ո՜հ, ես այդ բանը կանեմ», ի նկատի ունենալով դա մեր սրտում, բայց կարող են առաջանալ հանգամանքներ և մենք չկարողանանք մեր ասածն անել: Բայց Աստծո մոտ այդպես չէ, որովհետև Նա անսահման է և գիտի ամեն ինչ՝ ինչ եղել է, պիտի լինի կամ...Ուստի Նա չի կարող անել մի հայտարարություն, մինչև չիմանա, որ կարող է այն հաստատել:

12 Աբրահամը, երբ հարյուր տարեկան էր, նա չլինող բաները լինողի պես էր կանչում: Ես սա ասում եմ՝ որպես քաջալերանք նրանց, ում համար աղոթք է արվելու՝ հիվանդներին: Աբրահամը չլինող բաները լինողի պես էր կանչում, համարելով, որ Նա, Ով տվել է այդ խոստումը, կարող է կատարել կամ պահել այն, ինչ խոստացել է: Երբ Աստված Աբրահամին ասաց, երբ վերջինս վաթս...յոթանասունհինգ տարեկան էր, իսկ Սառան՝ վաթսունհինգ, որ նրանք երեխա են ունենալու, դա բացարձակ անհնար էր: Բայց Աբրահամը հավատաց և սպասեց այդ երեխային՝ համարելով դա որպես արդեն կատարված, քսանհինգ տարի մինչ երեխայի հայտնվելը: Աբրահամը հարյուր տարեկան էր, երբ երեխան ծնվեց, իսկ Սառան՝ ինսուն, որովհետև նա հավատաց Աստծուն: Նա չլինող բաները լինողի պես էր կանչում:

13 Հիմա, ես դա ասում եմ հիվանդներին և տկարներին, որոնց համար աղոթք է արվելու: Կարևոր չէ, թե ինչ վիճակում եք, արդյո՞ք դուք...ինչ հիվանդությամբ եք տառապում, թե որքան վատ եք ձեզ զգում, երբ դուք ընդունում եք Քրիստոսին՝ Իր Խոսքը, այդ ժամանակ, դուք եղած բաները համարում եք որպես գոյություն չունեցող, եթե դրանք հակառակ են Աստծո Խոսքին: Հիմա, Հիսուսն ասաց. «Հավատով արված աղոթքը պիտի փրկի հիվանդին»: Եթե Աստված է այդ ասել, դա կարգավորում է ամեն բան: Ուրեմն եկե՛ք մեր մտքերն ու հույսերը ուղղենք, և գործենք այնպես, կարծես թե դա արդեն կատարվել է: Երբ մենք դա ընդունում ենք, այդ հարցն արդեն լուծված է:

14 Այդպես է նաև փրկության հարցում: Մենք հավատում և ընդունում եք դա, հավատում ենք մեր սրտերում, գալիս ենք Աստծո առջև, ընդունում ենք Քրիստոսին՝ որպես մեր անձնական Փրկիչ և Նրան ընդունում ենք: Եթե այս առավոտ դուք այստեղ եք և չփրկված մեղավոր եք, հիվանդ եք և ուզում եք բժշկվել, նախ փնտրե՛ք Տիրոջը: Ընդունե՛ք Նրան որպես ձեր Փրկիչ, այդժամ այդ հիվանդության հարցը կլուծվի: Ինչ էլ որ լինի, պարզապես ձեր ողջ միտքը ուղղեք (այն ամենը, ինչ ունեք) կատարյալ Մարդու՝ Հիսուս Քրիստոսի վրա և ամեն բան կարգին կլինի:

15 Եվ այսպես, պահե՛ք դա ձեր մտքում, որովհետև այս մի քանի խոսքերը ես ասացի հիվանդների և տառապանքի մեջ եղողների համար, որովհետև ես այսօր դիմելու եմ եկեղեցուն և խոսելու եմ նրա վիճակի մասին: Եվ չնայած որ զգում եմ աստվածային բժշկությունը հրաշալի բան է, բայց երբ Ծրեվպորտում էի, այնտեղ մոտ երեք կամ գուցե չորս բժշկության ծառայություն ունեցա տասնչոր օրերից: Ավելի կարևոր է մարդկանց հոգիներին քարոզելը, քան աստվածային բժշկությանն այդքան ժամանակ տրամադրելը: Չնայած այն մարդիկ, ովքեր հիվանդ ու կարիքավոր են, Աստված կարող է օգնել նրանց: Եվ աշխարհով մեկ արդեն ապացուցված է, որ Նա անում է դա: Սակայն կարևորը հիմա այն հոգուն, որ երբեք չի մահանա: Մարմինը կմահանա, բայց հոգին երբեք չի մահանա, և մենք պետք է կենտրոնանանք դրա վրա և չշեղվենք Աստծուց:

16 Ես հաճախ եմ դա ասել: Ես ուզում եմ, որ ամեն բան արված լինի, որովհետև երբ ես այն առավոտ իջնեմ այդ

գետի մոտ, չեմ ուզում որևէ խնդիր ունենալ այնտեղ: Ես ուզում եմ, որ իմ տոմսը իմ ձեռքում լինի, սպասելով իմ անվանը: Ես ուզում եմ ասել, ինչպես Պողոսն ասաց մի ժամանակ, եղբայր Կրիչ. «Ես ճանաչում եմ Նրան Նրա հարության զորության մեջ»: Որ երբ Նա կանչի մեռելներից, ես դուրս գամ…Ես ուզում եմ Նրան ճանաչել Նրա հարության զորության մեջ:

17 Այժմ եկե՛ք մի պահ խոնարհենք մեր գլուխներն ու սիրտերը Նրա առջև, Ով այս Գրքի Հեղինակն է:

18 Ո՛վ Աստված, մեր Հայր, այժմ մենք գալիս ենք Քո առջև խնդրելու, որ Դու բացես Քո Խոսքը մեզ համար: Մենք կարող ենք թերթել էջերը, բայց միայն Սուրբ Հոգին կարող է Խոսքը բացել: Ուստի Հայ՛ր, բացի՛ր այս առավոտ Քո Խոսքը մեզ համար, և տո՛ւր մեզ Քո շնորհի անսահման առատությունը: Մենք Քեզանից ենք ակնկալում: Եվ թող Սուրբ Հոգին մտնի Խոսքի մեջ և փոխանցի Դա մարդկանց սրտերին մարդկային շրթունքներով, թող Նա վերցնի Խոսքը և դնի յուրաքանչյուր սրտում մեր կարիքների համեմատ: Եվ երբ այս հավաքույթը վերջանա, և մենք պատրաստ կլինենք մեր տները վերադառնալու, խոնարհությամբ խոնարհենք մեր գլուխները և գոհություն ու փառք տանք Քեզ այն ամենի համար, ինչ սովորեցինք Քեզանից և այն ամենի համար, ինչ կատարեցիր մեզ համար: Խնդրում ենք այդ Քրիստոսի Անունով: Ամեն:

19 Կարդում ենք Խոսքը Հովհաննու Ավետարանի 1-ին գլխից, նրանք, ովքեր Աստվածաշունչ ունեն, կարող են ինձ հետ միասին կարդալ կամ տեքստը նշել: Տեքստը կկարդանք Խոսքից, իսկ հետո կաղոթենք որ Սուրբ Հոգին Խոսքից վերցնի համատեքստը և տա մեզ: Մենք, որ կարդալ գիտենք, կարող ենք Այն կարդալ, բայց միայն Աստված կարող է համատեքստը բացել: Այս տեքստը կարող է կարդացվել, որովհետև Դա Իր Խոսքն է, բայց համատեքստը պետք է Աստծո կողմից տրվի: Եվ այսպես, Հովհաննու Ավետարանի 1-ին գլուխ, եկե՛ք սկսենք 28-րդ համարից և կարդանք մինչև 32-րդը ներառյալ:

> *Սա եղավ…?…Հորդանանի այն կողմին, ուր որ Հովհաննեսը մկրտում էր:*
>
> *Հետևյալ օրը Հովհաննեսը տեսնում է Հիսուսին իրան մոտ գալիս, և ասում է. «Ահա Աստծո Գառը, որ վեր է առնում աշխարհքի* մեղքերը:

Եվ Սա է, որի համար ես ասում էի, թե՝ ինձանից հետո մի մարդ է գալիս, որ ինձանից առաջ եղավ, որովհետև ինձանից առաջ էր:

Եվ ես նրան չգիտեի. այլ նա...*այլ որ նա հայտնիլ լինի Իսրայելին, դրա համար ես եկա ջրով մկրտելու»:*

...վկայեց Հովհաննեսը և ասաց, թե տեսնում էի Հոգին, որ աղավնու պես վայր էր գալիս երկնքիցը և Նրա վրա մնում:

Ուզում եմ վերջին՝ 32–րդ համարը նորից կարդալ:

Եվ վկայեց Հովհաննեսը և ասաց, թե տեսնում էի Հոգին, որ աղավնու պես վայր էր գալիս երկնքիցը և Նրա վրա մնում:

20 Թող Տերն Իր օրհնությունն ավելացնի Խոսքին: Ուզում եմ, որ փորձեք որսալ ամեն բառը, եթե կարող ենք: Վերջում լա՞վ եք ինձ լսում: Շատ լավ, իսկ խորքում գտնվողները լա՞վ են լսում: Եթե լսում եք, բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Հրաշալի է:

21 Այսօր ես ուզում եմ ձեզ հետ խոսել առակներով, որպեսզի այստեղ գտնվող նույնիսկ ամենա ոչ եկեղեցական մարդուն դա հասանելի լինի: Մենք գալիս ենք եկեղեցի, որ ավելի լավը դառնանք՝ ավելի լավ մարդիկ, ավելի լավ քրիստոնյաներ, ավելի լավ քաղաքացիներ, ավելի լավ հայրեր, ավելի լավ մայրեր, ավելի լավ հարևաններ դառնանք: Մենք գալիս ենք, որովհետև Քրիստոսն ասաց, որ եթե մեկտեղ հավաքվենք ինչ–որ բան խնդրելու Նրա անունով, ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն, Նա մեզ հետ կլինի և կշնորհի դա մեզ: Այսպիսով՝ ի՞նչը կարող է ավելին, ավելի լավ լինել մեզ համար այսօր, քան իմանալ, որ մենք եկեղեցում ենք, որ ավելի լավ մադիկ դառնանք, որ ընդլայնենք մեր հասկացողությունը: Քանի՞սդ կասեք՝ «Ես դրա համար եմ այստեղ»: Տեսնենք: «Ես, ես ավելի լավ հասկացողություն եմ ուզում ունենալ»: Մենք չենք, մենք չենք կարող ավելի լավ հասկացողություն ունենալ, եթե չ...Եթե մենք ուզում ենք աստվածային հասկացողություն ունենալ, դա պետք է բխի Աստծո Խոսքից, որովհետև Խոսքն է, որ Աստված տվել է մեզ մեր քաղցած հոգիները կերակրելու համար: Եվ Սուրբ Հոգին ուղարկվեց, որ վերցնի Աստծո Խոսքը և կերակրի մեզ Խոսքով: Հասկանո՞ւմ եք դա: Հասկանո՞ւմ եք, մենք...Սուրբ Հոգին ուղարկվեց Աստծուց, որ վերցնի

Աստծո Խոսքը և տա մեզ, քանի որ մենք կարիք ունենք: Ես այնքան երջանիկ եմ Աստծո այդպիսի մատակարարման համար: Իսկ դո՞ւք: Որ Նա մեզ կերակրում է:

22 Մենք Նրա արոտի ոչխարներն ենք: Մենք մի փոքր կխոսենք ոչխարների մասին: Մենք Աստծո եռակի էակներն ենք, և երբ Նա կարողանա ամբողջական իշխանություն ունենալ մեր վրա, Նա կկարողանա առաջնորդել և ուղեկցել մեզ:

23 Աստծուն այնպես հաճելի եղավ, որ երբ Նա Հիսուսին ուղարկեց երկրի վրա, Նրան հաճելի եղավ Հիսուսին ներկայացնել որպես կենդանի, և այդ կենդանին գառն էր: Դեռևս սկզբում՝ Եդեմի պարտեզում, Հիսուսի գալստյան նախապատկերներում, Աստված գառ զոհեց որպես Հիսուս Քրիստոսի գալստյան նախանշանի փոխանորդ: Ինձ հաճախ զարմացնում էր այն փաստը, թե Աստված ինչու կենդանուն տվեց որպես Քրիստոսի նախատիպ: Բայց մենք պարզում ենք, որ, Գառնուկը, պատճառը, թե Աստված ինչու ընտրեց գառնուկին, այն էր, որ գառնուկը երկրի վրա եղած բոլոր կենդանիներից ամենահեզն ու ամենախոնարհն է: Չկա ոչ մեկը առավել խոնարհ ու հեզ, քան փոքրիկ գառնուկը, նա այնքան անմեղ ու անինքնուրույն է: Նա, նա ինքն իր վրա հույս չի դնում: Գառը հեզ ու խոնարհ, փոքրիկ կենդանի է: Եվ երբ Աստված պատրաստվում էր Քրիստոսին ներկայացնել աշխարհին, Նա Նրան ներկաացրեց գառնուկի տեսքով:

24 Սակայն երբ Աստված՝ Հայր Աստվածը՝ Եհովան, պատրաստվում էր Ինքն Իրեն ներկայացնել Երկնքից, Նա ներկայացավ երկնքի բոլոր թռչուններից ամենահեզ ու ամենախոնարհ թռչունի տեսքով, որն աղավնին էր: Աղավնուց առավել հեզ թռչուն չկա: Ես բավականաչափ ուսումնասիրել եմ թռչուններին և վայրի բնությունը, և աղավնին, ի տարբերություն երկնքում թռչող մյուս թռչունների, շատ առանձնահատուկ է: Աղավնին սեր է: Աղավնին հեզ է: Եվ աղավնին լեղի չունի, թռչունների ընտանիքում միակն է, որ լեղի չունի: Դրա համար աղավնուն երբեք չեք տեսնի ամենուրեք, այլ միայն այնտեղ, որտեղ հատիկներ և սերմերի կան: Հիմա…

25 Տապանի մեջ աղավնի կար: Աստվածաշնչում աղավնին ներկայացված է տարբեր համատեքստերում: Աղավնին Սուրբ Հոգու խորհրդանիշ է: Ինչպես աղավնին, այնպես էլ գառը, ներկայացված է աստվածաշնչյան

տարբեր տեղերում՝ որպես Քրիստոս, Ծննդոցից մինչև Հայտնություն։

26 Ծննդոց գրքում աղավնին Նոյան տապանի մեջ էր, օդի թռչունների հետ միասին նստած էր թառին. և թռչուններից մեկն ագռավն էր։ Ագռավը թռչունների մեջ ամենաանմաքուրն է, կարծում եմ ագռավն ու ճայը ամենաանմաքուր թռչուններն են, որոնց կարող ենք գտնել։ Ագռավը երկարակյաց թռչուն է, և երբեմն ապրում է, ինչպես ասում են, 200 կամ 300 տարի։ Դա ագռավը... Թութակը ագռավից ավելի երկար է ապրում։

27 Բայց աղավնին մի կենդանի է, այսինքն թռչուն, որը լեղի չունի։ Ագռավը կարող է նստել այնտեղ և սնվել դիակից։ Բայց աղավնի երբեք չեք տեսնի դիակի շուրջ։ Նա չի կարող դա հանդուրժել։ Նա չի կարող հանդուրժել գարշահոտություն իր կտուցում։ Դա կհիվանդացնի նրան։ Աղավնիները նեխած, փչացած բաները պարզապես չեն կարող հանդուրժել։ Նրանք չեն կարող դա հանդուրժել, հետևաբար նա չի կարող սնվել դրանից։ Եթե ուտի, դա անմիջապես կսպանի նրան, որովհետև սննդի յուրացումը օրգանիզմի կողմից կախված է ստամոքսի մեջ եղած լեղու քանակից, ինչը նպաստում է սննդի յուրացմանը։ Իսկ եթե օրգանիզմում լեղին բացակայում է սննունդը յուրացնելու համար, ուրեմն դա կսպանի աղավնուն։ Դրա համար աղավնուն միշտ կգտնեք մաքուր է, առողջ բանի շուրջ։

28 Ագռավն ուրիշ է։ Այժմ ուշադրությո՛ւն դարձրեք, ագռավը կեղծավորության խորհրդապատկերն է։ Առգավը կարող է նստել դիակի վրա և ուտել դրանից իր ուզածի չափով, հետո թռչել դաշտ և ցորեն էլ ուտել։ Բայց աղանվնին չի կարող ուտել ցորեն, իսկ հետո թռչել և նստել դիակի վրա։

29 Այսպիսով կեղծավոր...Մարդը կարող է կեղծավոր լինել, և սնվել թե՛ հոգևոր, թե՛ լավ և թե՛ վատ բաներից։ Բայց ճշմարիտ վերստին ծնված քրիստոնյան սխալ բաները հանդուրժել չի կարող, և միայն լավ բաներից կարող է սնվել։ Ուշադրություն դարձրե՛ք դրան։ Երբ տեսնում եք, որ մի տղա ինչպես է կարողանում գնալ պարի, գնալ դուրս և խմել, մեղքի մեջ ապրել, իսկ հետո կրկին եկեղեցի վերադառնալ և գուցե աղաղակի նույնքան, որքան և սուրբը, ի՞նչ է նա. աղբահոր է։ Նա կարող է սնվել թե՛ նեխած, թե՛ լավ բաներից։ Բայց ճշմարիտ քրիստոնյան այդ բաներն այլևս չի կարող

հանդուրժել, որովհետև նա մահից անցել է դեպի Կյանք։ Դա անմիջապես մեղադրելու է նրան, ինքնին միտքն այդ մասին, հանդիմանելու է նրան այնպես, որ նա կշրջի իր հայացքը և կհեռանա այնտեղից։ Ո՛հ, ինչպիսի պատկեր։

30 Եվ այսպես, գառը շատ հեզ կենդանի է։ Նա ինքն իրեն չի կարող օգնել։ Նա անկախ չէ, որովհետև ինքն իրեն չի կարող օգնել։ Մի օր, երբ պարեկություն էի անում, անցնելով արոտավայրի միջով գտա մի գառ, բոլորը նրանից հեռացել էին ինչ-որ տեղ, իսկ ինքը փշալարերի մեջ խճճվել մնացել էր։ Այդ խեղճ գառը պառկած էր այնտեղ, նա արյունահոսում և բառաչում էր։ Կողքով անցնելիս, տեսա, որ մոտ կես մղոն հեռավորության վրա վերևում ոչխարների մի ամբողջ հոտ էր արածում։ Բայց նա պառկած էր այնտեղ, և ագռավները շատ շուտ նրա աչքերը կհանեին, եթե դուրս չբերեինք նրան այնտեղից։ Ես այդ փոքրիկին ազատեցի և վերցրեցի ձեռքերիս վրա։ Նա չէր դիմադրում։ Հանգիստ պարկած էր։ Ես նրան վերցրեցի ձեռքերիս վրա։ Գուցե առաջին, առաջին անգամ էին մարդու ձեռքերը դիպչում նրան, բայց նա հեզ էր։ Նա ցանկանում էր տարված լինել։ Նա ցանկանում էր, որ իրեն օգնած լինեն։ Հուսով եմ՝ տեսնում եք դա։ Նա չէր ցանկանում դիմադրել, քացի տալ կամ կծել։ Գառները քացի չեն տալիս, չեն կծում, նրանք պարզապես խոնարհվում են։ Եվ այդ փոքրիկ գառնուկը…ես վերցրեցի նրան և իջեցրի մնացած ոչխարների մեջ։ Մի քանի րոպեից մայրը գտավ նրան, որքա՜ն ուրախ էր նա։ Հիմա, որքա՜ն բնորոշ է դա Աստծո Գառնուկին։

31 Դուք գիտեք, թե որտեղ են գնում ոչխարներին մորթելու, գիտեք նաև, թե ով է նրանց տանում սպանդանոց՝ նոխազը։ Բայց նոխազը ոչխարին տանում է ուղիղ մինչև սպանդանոցի ուղղաձիգ զառիվայրը, իսկ հետո հենց ոչխարները մոտենում են փողրակին, այդ ժամանակ ինքը ցատկում է դուրս։ Բայց, ո՛հ, ասում են, որ երբ նոխազին են պատրաստվում մորթել, մեծ աղմուկ է բարձացնում։ Տեսնո՞ւմ եք։

32 Սատանան էլ է այդպես անելու։ Նա կփորձի Աստծո զավակներին տանել ամենախորքը, բայց երբ գալիս է իր մեռնելու ժամը, մեծ աղմուկ է բարձացնում։ Ահա թե ինչպես է սատանան դա անում։ Եվ այսպես երբեմն անառակ ինչ-որ աղջիկ կամ ինչ-որ «գողական» տղա՝ ծխատուփը կամ վիսկու շիշը ձեռքին, ճանապարհից շեղում է մի աղջկա, ինչ-որ մեկի հոտից։ «Ո՛հ, ամեն

ինչ կարգին է, դա անհեթեթություն է, ողջ այդ ձևական եկեղեցական առաքինությունը»: Բայց թող մի ամգամ մահը հարվածի այդ տղային, կլսեք նրա գոռգոռոցն ու ճիչը ողջ երկրով մեկ: Ահա թե ինչպես է անում սատանան:

33 Բայց գառը այնքան հեզ է, որ նա կարող է տարվել: Ահա թե ինչու Աստված Քրիստոսին ներկայացրեց որպես Գառ, իսկ Իրեն՝ Աղավնի: Եվ այն օրը, երբ Հովհաննեսը Հորդանան գետում մկրտեց Հիսուսին, ամենամեծ իրադարձություններից մեկը, որ կատարվեց, տեղի ունեցավ այնտեղ: Տեսե՛ք, թե որքան գեղեցիկ է: Երկրի բոլոր ստեղծագործություններից ամենահեզը Գառն է, իսկ երկնքի բոլոր թռչուններից ամենահեզը՝ Աղավնին: Դա միակ ճանապարհն էր, որով նրանք կարող էին միավորվել: Դա միակ ճանապարհն էր, որով Աղավնին կարող էր իջնել Գառնուկի վրա: Եվ երբ Աղավնին իջավ, Հովհաննեսը տեսավ Հիսուսին, և ասաց. «Ահա Աստծո Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքերը»: Եվ Հովհաննեսն ասաց. «Ես վկայում եմ, որ տեսնում եմ Աստծո Հոգին, որ աղավնու պես վայր է գալիս երկնքից և Նրա վրա մնում»: Ալելո՜ւիա: Ահա՛, խնդրեմ: Աղավնին ու Գառը միացան: Ահա թե երբ Աստված և Մարդ մեկ դարձան: Ահա թե երբ երկինքն ու երկիրը ողջագուրվեցին: Ալելո՜ւիա: Ահա թե երբ Աստված մարմին դարձավ, բերեց այն, ահա թե երբ Աստված Հոգու տեսքից վայր իջավ, Մարդ դարձավ և մեր մեջ բնակվեց: Ահա թե երբ ողջ հավիտենությունը ողջագուրվեց: Ահա թե երբ Ադամի ընկաց մարդկային ցեղը, Եհովա Աստվածն ու ամեն հրեշտակ միացան, երբ Աստված ու մարդը մեկ դարձան, այդ մեծ հիշարժան օրը, երբ Հովհաննեսը մկրտեց Հիսուսին:

Իսկ ի՞նչ կլիներ, եթե նրանք գայլեր լինեին: Աղավնու անուշիկ դունդունոցն երբեք չէր կարողանա կանգնել գայլի կողքին:

34 Ի՞նչը կարող է ավելի հաճելի լինել, քան ուշ երեկոյան ունկնդրել, թե ինչպես է աղավնին թառում մի տեղ և դունդունում: Կնոջս և երեխայիս կորցնելուց հետո... ավելի լավ էր, որ ոչ ոք չիմանար, թե ես ինչ էի անում: Ես նստում էի իմ հին մեքենան և գնում գերեմզան՝ Վոլնատ Ռիջ, նստում էի այնտեղ ծառի կողքին և նայում ցած՝ գերեզմանին: Ուղղակի չէի կարողանում լքել նրանց: Թվում էր, թե այլևս չեմ կարող դիմանալ: Մտածում էի իմ ութ ամսեկան փոքրիկի մասին, ով պառկած էր այնտեղ:

Ինչպես էր իր թաթիկները պարզելով հասնում ինձ և ես փող էի փչում կամ ինչ-որ բան էի ասում նրան, և նա «գու, գու» էր անում և պարզում էր իր թաթիկները: Ես նստում էի ծառի կողքին մանավանդ, երբ իջնում էր երեկոն: Այնտեղ մի աղավնի կար, որ գալիս նստում էր թփերի մեջ և սկսում էր դունդունել: Ո՜հ, Աստված իմ: Մի անգամ մտածեցի, որ գուցե դա իմ երեխայի անմահ հոգին է, որ գալիս է և փորձում է խոսել ինձ հետ: Ավելի քաղցր բան չկա, քան աղավնու դունդունոցը: Որքա՜ն սիրող է նա: Նա ավետաբեր է: Ինչպե՜ս է ջանում խաղաղություն անել: Առավոտ կանուխ արթնանում և գնում էի բնակավայրիս մոտ գտնվող թավուտները, ի՜նչ խաղաղություն էր գալիս նրանց ունկնդրելուց: Ինչպես են այդ հսկայական ծառի վրա նստած աղավնիները դունդունում իրար:

35 Մի անգամ եղբայր Կոքսի մոտ ծեր մայր աղավնի և երկու ծագեր կային: Նրանք նստում էին ուղիղ կտուրին, որ կատուները չհասնեն նրանց: Եվ ծեր մայր աղավնին կերակրում էր նրանց: Այնուհետև իջավ, վերցրեց նրանց և բարձրացրեց ծառին, և այդ երկու փոքրիկ, նուրբ աղավնյակները նստում էին այստեղ, վզիկներով միմյանց սեղմված, և դունդունում, և սիրում էին իրար ամբողջ օրը շարունակ:

36 Եվ ես մտածում էի այն մասին, թե Աստված ինչպես է...(աղավնին այնքան սիրող թռչուն է), և Աղավնին, Աստված ուզում է սիրո հարաբերությունների մեջ լինել Իր մարդկանց հետ: Աստված ուզում է սիրվել: Նա ուզում է ձեզ սիրել: *«Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:* Թող օրհնյալ լինի Տերը: Հետո Աստված, ով ուզում է սիրո հարաբերությունների մեջ լինել, Նա պետք է...սիրող մի բան ստեղծեր: Նա պետք է Իր նման հեզ մի բան ստեղծեր: Նա պետք է ստեղծեր մի բան, որը կկարողանար սիրել: Նա պետք է Իր բնույթի նման մի բան ստեղծեր:

37 Դուք չէք կարող սիրել մի բան, որը ձեր սեփական բնույթից չէ: Սիրողը պետք է միավորվի սիրո հետ: Ամուսինները պետք է սիրեն միմյանց, եթե նրանք պատշաճ բարձրության վրա են: Ընտանիքի անդամները պետք է սիրեն միմյանց, եթե նրանք պատշաճ բարձրության վրա են: Մի բան, որ կկարողանա սիրել: Դուք ամենուր փնտրում եք՝ փորձելով գտնել մի աղջկա, ով կլինի ձեր կինը, որին սիրում եք: Նա էլ փնտրում է՝

փորձելով գտնել մի փեսացու, որին կկարողանա սիրել։

38 Աստված էլ փնտրում է՝ փորձելով գտնելի ինչ–որ մեկին, որին կկարողանա սիրել։ Այսպիսով, Նա երկրի վրա Ինքն Իրեն ներկայացրեց որպես հեզ աղավնի և խոնարհ Գառնուկ։ Եթե այդ Գառը թեկուզ մեկ վայրկյան ընդուներ ոռնացող գայլի բնույթ, ապա Աղավնին անմիջապես կթռչեր, կհեռանար։

39 Բայց գառը իր մասին շատ մեծ կարծիք չունի։ Երբ գառը կորչում է, անհույս կորած է համարվում։ Ոչխարը չի կարող գտնել իր դարձի ճանապարհը։ Դրա համար է այծը նրան տանում մահվան։ Կորած ոչխարը չի կարող գտնել իր ճանապարհը։ Դրա համար Աստված մեզ նմանեցրեց ոչխարների։ Եթե կորում ենք, ուրեմն կորած ենք։ Մենք չեն կարող ինքնուրույն գտնել ճանապարհը։ Այդ անելու միակ ձևը մեզ հոտի Հովվին ենթարկվելն է, և Նա մեզ կառաջնորդի։

40 Ինչպես նկտատեցի այս Գառն ու ոչխարը միասին... այսինքն՝ Գառն ու Աղավնին մեկ դարձան։ Այնուհետև տեսե՛ք, թե այդ Աղավնին ինչպես էր առաջնորդում Գառնուկին՝ Աստծո Որդուն։ Որքան հեզ էր Նա՝ իմանալով, որ տարվում է մորթվելու։ Որքան հեզ էր Նա, որ երբեք չէր փորձում Ինքն իրենով անել, չէր փորձում ինքնաբավ լինել։ Նա ասաց. «Ես ոչինչ չեմ անում, եթե Հայրը Ինձ նախապես ցույց չի տվել, և Հայրը բնակվում է Իմ մեջ»։

41 Գառնուկի ուրիշ յուրահատկությունն այն է, որ նա ցանկանում է հրաժարվել իր իրավունքներից։ Աստված ուզում է, որ մենք գառներ լինենք, բայց որքան հաճախ մենք չենք ուզում հրաժարվել, թողնել մեր իրավունքները։ Ձեզանից շատ շատերն ասում են. «Լավ, բայց դա իմ իրավունքն է, եղբայր Բրանհամ»։ Ճիշտ է, բայց արդյո՞ք չեք ցանկանում թողնել ձեր իրավունքները։ Արդյո՞ք ցանկանում եք տալ ձեր իրավունքները, որ Աստված ձեզ առաջնորդի։ Ահա թե ինչումն է խնդիրը մեր եկեղեցիների հետ այսօր՝ ճնշող մեծամանության մեջ Աստծո Գառան այդ հեզությունը...Մենք պետք է գառ լինել, մենք բացի գառնուկից ինչ ասես դարձել ենք։ Այդ է պատճառը, որ հենց մենք նման դիրք ենք ընդունում Սուրբ Հոգու Աղավնին թռչում, հեռանում է։

42 Եթե Աստծո Գառը գայլի նման ոռնար կամ աներ հակառակ ինչ–որ բան, որն այդ հեզ Աղավնին էր թույլ տվել, Նա կթռներ, վայրկենապես կհեռանար։

43 Ահա թե ինչու ենք մենք այսօր զարմանում: Ի՞նչ է կատարվում հոգեգալստական եկեղեցու հետ: Որովհետև մենք ուրիշ բնույթ ենք ձեռք բերել: Մենք այսպիսի բնույթ ենք ձեռք բերել՝ «Մենք ուզում ենք մեր իրավունքները: Մենք անելու ենք այն, ինչ ճիշտ ենք համարում»: Մենք դարձել ենք ինքնահավան: Մենք դարձել ենք կռվարար: Մենք անտարբեր ենք դարձել: Մենք տրվում ենք մեր տրամադրությանը: Մենք տրվում ենք եսասիրությանը:

44 Երբ ժամանակը գալիս է գառը...նրան է պատկանում իր սեփական բուրդը, դա է իր իրավունքը: Նրա բուրդն իրեն է պատկանում, բայց նրանք վերցնում են այդ գառնուկին, պառկեցնում են կոճղի վրա և կապում են ոտքերը: Նա երբեք քացի չի տալիս, չի թպրտում: Դուք վերցնում ենք նրանից նրա իրավունքները, որովհետև նա գառ է: Նա ոչինչ անել չի կարող, որովհետև դա է իր բնությունը: Բայց քրիստոնյայի ոտքը տրորի մի անգամ և կտեսնես նա գառ է արդյոք, թե այծ: Կտեսնես, թե ով է նա, մի անգամ, եթե մի անգամ տրորես նրա ոտքը: Ահա թե ինչու են մեր եկեղեցիներն այսօր այն վիճակում, որում կան:

45 Մենք մեզ Աստծո գառ ենք անվանում: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք սկսել են գործել ամեն կերպ, Աստծո գառներից բացի: Տեսեք, թե ինչպես են քայլում փողոցներում կարճատաբատներով, մազերը կարճ կտրած, խոպոպներով: Մի քանի տարի առաջ դուք... դուք, նրանք...հնարավոր չէր լինի ստիպել նրանց այդպես վարվել: Իսկ հետո զարմանում եք, թե եկեղեցին ինչու է այն վիճակում, որում կա: Որովհետև հեզությունն ու խոնարհությունը պահպանելու փոխարեն գայլի կամ այծը բնույթն եք ձեռք բերել: Իսկ դուք ասում եք. «Դա իմ արտոնությունն է, եղբայր Բրանհամ»: Ես գիտեմ, որ դա ձեր արտոնությունն է: «Վարսավիրները մազ են կտրում: Եվ քանի դեռ վարսավիրները մազ են կտրում, մի՞թե ես իրավունք չունեմ»: Ճիշտ է, դա ձեր ամերիկյան արտոնությունն է: Բայց արդյո՞ք ցանկանում ես դրան վերջ տալ, որպեսզի գառ դառնաս: Արդյո՞ք ցանկանում ես հնազանդվել:

46 Եվ դուք՝ կանայք, ոչ շատ վաղուց քայլում էիք փողոցով...ծիծաղելի է տեսնել, թե կանաք ինչպես են հագնվում այսօր: Ես չեմ խոսում երեցականների և մեթոդականների մասին, ես դիմում եմ ձեզ, սո՛ւրբ կանանց: Քայլում են փողոցով և դա...

47 Ես իմ մեքենայի մեջ փոքրիկ մի խաչ ունեի կախած, ինչ-որ մեկն ինձ ասաց. «Բիլլի՛, դու գիտե՞ս, որ դա կաթոլիկ խորհրդանշան է»:

48 Ես ասացի. «Այդ ե՞րբ են կաթոլիկները խաչը ընտրել»: Երբե՛ք: Խաչը կաթոլիկ հավատքի խորհրդանշանը չէ, խաչը քրիստոնեական հավատքի խորհրդանշանն է: Կաթոլիկ հավատքն ինչ-որ սուրբ մեռել է, Մարիամը կամ, կամ ինչ-որ մեռած մարդ, ում նրանք երկրպագում են: Մենք չենք երկրպագում մեռելներին: Մենք չենք երկրպագում սուրբ Սեսիլիային և բոլոր նմանատիպ սուրբերին: Դա կաթոլիկություն է, որը ոգեհարցության բարձր ձևն է: Բայց խաչը ներկայացնում է Նրան, Ով մեռավ և դարձյալ հարություն առավ:

49 Ես ասացի. «Ես սա պահում եմ, երբ նայում եմ փողոցներին: Քսանհինգ-երեսուն տարի առաջ, երբ ես գրեթե կույր էի, խոստացա Աստծուն, որ եթե Նա իմ աչքերը բժշկի, ճիշտ բանին կնայեմ»: Ես ասացի, ուր նայում ես, այնքան անաստվածություն է, կանայք կիսամերկ են, բակերում և ամենուր մերկ կանայք են պառկած: Ես նայում եմ այս խաչին (և հիշում, թե ինչ է Քրիստոսն արել ինձ համար և շրջում եմ գլուխս), սատանայի բաներին նայելու փոխարեն: Ալելո՛ւիա:

50 Եվ դուք...Մի՛ ասեք, թե դա «երիցական կամ կաթոլիկ խորհրդանշան է», դա հոգեգալստական խորհրդանշան է: Ամեն: Դուք կասեք. «Ես իրավունք ունեմ, Բրանհամ եղբայր»: Ճիշտ է, բայց եթե դու գառ լինեիր՝ կհրաժարվեիր քո իրավունքներից: Եվ երբ դու այնդպես ես անում, Սուրբ Հոգին՝ հեզ Աղավնին, անմիջապես թռչում, հեռանում է: Նա չի խայտառակվի քեզ հետ միասին: Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Երբեք չկարծեք, որ այդպես կանեք և կպահպանեք Սուրբ Հոգին: Դա ձեզ չի հաջողվի: Աստվածաշունչն է այդպես ասում: Դուք պետք է հրաժարվեք ձեր...Դե, դուք կասեք. «Ուրիշ կանայք դա անում են»:

51 Իսկ դուք՝ խեղճ, ողորմելի տղամարդիկ, դուք որ թույլ եք տալիս ձեր կինը նման բաներ անի, դա ցույց է տալիս, թե դուք ինչ խմորից եք թխված: Ահա թե ինչու դուք Սուրբ Հոգին չեք ստացել, ինչպես հայտարարում եք, թե ունեք, այլապես բավական Բան կունենաիք ձեր մեջ ձեր կնոջը ստիպելու, որ լեդիին վայել ձևով իրեն պահի, համենայն դեպս, քանի դեռ ապրում է ձեզ հետ: Ամեն: Դա հնաոճ և կտրուկ է հնչում: Ահա ինչի

կարիքն ունի այսօր եկեղեցին՝ հնաոճության, Սուրբ Հոգով լվացման, կախման, չորացման և արդուկվելու կարիքն ունի: Անկասկած:

52 Ի՞նչ վիճակում է հայտնվել աշխարհն այսօր: Ինչպե՞ս են կանայք դուրս գալիս փողոց և իրենց պահում: Ինչպես եք հինգշաբթի երեկոյան ձեր գլուխը մտցնում հեռուստացույցի մեջ և չեք գնում եկեղեցի: Ինչպես եք դուք...բայց այս երկրում չկա երեխա, որ չիմանա, թե ով է Դեյվիդ Կրոկետը: Եվ այդ կեղտոտ սուտը, թե երբ երեք տարեկան էր արջ է սպանել, դուք գիտեք, որ դա սուտ է, բայց թույլ եք տալիս, որ ձեր երեխայի գլուխը լցնեն նման հիմարությունով: Բայց հարյուրից մեկ տոկոսն էլ չկա, որ ինչ–որ բան իմանա Հիսուս Քրիստոսի մասին, որովհետև այս աշխարհն այնքան ապականված է դարձել: Այս ազգը, այնքան զավեշտական և Աստծուց այնքան հեռու, մերժել է Սուրբ Հոգին:

53 Ո՛հ, դուք կասեք. «Ես գնում եմ եկեղեցի և աղաղակում եմ»: Գուցե դուք անում եք դա, բայց քանի դեռ Աստծո այդ հեզ Գառը չհաստատվի ձեր սրտում և չստիպի, որ մաքրեք ձեր կյանքը և գործեք որպես ուրիշ մարդ, ապա քրիստոնեությանը նմանակվելը ոչ մի օգուտ չի տա: Դուք պետք է ունենաք Դա: Ամեն:

54 Ոչ շատ վաղուց մտա մի տուն հիվանդ մի մարդու այցելելու համար, և մի տիկին նստած էր այնտեղ: Փոքրիկ Օսվալդը գլխարկը թեք գցած ներս մտավ և ասաց. «Մայրի՛կ, ճաշը պատրա՞ստ է»:

55 Մայրիկն ասաց. «Սիրելի՛ս, մենք այսօր ժամանակ չենք ունեցել ճաշ պատրաստելու: Ես քեզ համար սենդվիչ կպատրաստեմ, այնտեղ նարինջներ կան»:

56 Նա գնաց, վերցրեց նարինջը, նայեց, բռունցքով հարվածեց և ամբողջ ուժով նետեց պատին, հյութը հոսեց պատով ցած և ասաց. «Եթե քո ունեցածը միայն դա է, ապա ես գնացի»:

57 Ես մտածեցի. «Ո՛վ Աստված, եթե նա իմը լիներ հինգ րոպեյով»: Ես նրա կաշին կքերթեի, այնպես կքերթեի, որ իմանար: Բայց նրանք խեղճ երեխաների նման պառկել էին այնտեղ: Այն, ինչի կարիքն այդ տղան ունի, լավ հնաոճ գառան մորթին է: Ահա թե մենք ինչի կարիքը ունենք, որպեսզի տան մթնոլորտը լինի այնպես, ինչպես նախկինում, և քարոզիչների, ովքեր կկանգնեն ամբիոնի առջև և կքարոզեն Ճշմարտությունը, և ամեն բան Իր

տեղը կդնեն: Ամե՛ն: Դա ճշմաչտություն է: Ո՞հ, Աստված իմ:

58 Փոքրիկ Մերին ոտքը գետնին խփեց, կիթը վեր ցցեց, «Մաքս Ֆակտոր» արտադրանքի շրթներկով ներկած վարդագույն շրթունքները ուռացրեց, գլուխը տնկեց և դուրս եկավ տանից: Ինչպչիսի՜ խայտառակություն: Ինչքա՜ն անհնազանդ են երեխաները: Աստվածաշունչն է ասում, որ նրանք այդպսին կլինեն: Սուրբ Գիրքն է ասում, որ նրանք այդպիսին կլինեն, թե ինչպես են իրենց պահելու, ինչպես են վարվելու և այն, ինչ կատարվում է այսօր աշխարհում, որովհետև նրանք վշտացրել և վանել են Սուրբ Հոգուն:

59 Մի քանի ամիս առաջ...Մի քանի օրից գնում եմ տոնելու Սուրբ Հոգու առաջին հեղումը Ամերիկայում, հիսունհինգ տարի առաջ հին Ազուզա փողոցում հավաքույթի՝ հոգեգալստական հավաքույթի ժամանակ, Լոս Անջելեսում, որտեղ տեղի ունեցավ Սուրբ Հոգու առաջին հեղումը, երբ մարդիկ միասին հավաքված էին: Երբ Քրիստոսը իջավ այդ մարդկանց մեջ, նրանք հեզ, խաղաղ էին: Նրանք աստվածավախ կյանքով էին ապրում: Նրանք զոհաբերված կյանքով էին ապրում: Նրանք ցանկանում էին հանձնվել: Նրանք ուզում էին առաջնորդված լինել Սուրբ Հոգով: Նրանց համար կարևոր չէր, թե մարդիկ ինչ էին ասում, նրանք «հնաոճ» են, թե «խելագար» են կամ էլի ուրիշ բան կասեն նրանց, նրանք ցանկանում էին առաջնորդված լինել Սուրբ Հոգով:

60 Բայց այսօր, ո՜հ, պուդրա քսած, շպարված, կարճատաբատները հանգին քայլում են փողոցով, ամոթ է: Եվ իրենց անավամ են «Սուրբ Հոգով լեցված»: Ո՜հ, դուք ասում եք. «Բայց ես խոսում եմ լեզուներով»: Այո, դևերն էլ են խոսում: «Ո՜հ, ես աղաղակել եմ», դևերը նույնպես աղաղակում են: Սատանան կարող է նմանակել Աստծո ունեցած բոլոր պարգևները, բացի սիրուց, սերը նա չի կարող նմանակել: Այո:

61 Հետո, առաջին բանը, որ նկատում եք, երբ սկսում եմ այդ բաներն անել՝ իջեցնում եք արգելապատերը և սկսում եք փոխզիջման գնալ, հետո եկեղեցին սկսում է կչկչոցներ հանել, խմբավորումներ ստեղծել և մեկն ասում է. «Գիտե՞ս, հովիվը *այս կամ այն բանն է արել,* կամ սարկավագը *այս կամ այն բանն է արել»*: Եվ առաջին բանը, որ նկատում ես՝ դու ականջ ես դրել դրան: Այդ է պատճառը, որ մենք այդքան շատ խնդիրներ

ունեցանք, որովհետև դուք սկսել եք լսել դևին, հեզ Աղավնու՝ Սուրբ Հոգու, փոխարեն, Աստծո Աղավնու, Ով կառաջնորդեր, կուղորդեր, կսիրեր և կօրհներ քեզ, Նրան լսելու փոխարեն, ոռնոցին եք ականջ դրել:

62 Հենց որ քեզ մոտ լինում են նման տրամադրության անկումներ, Աղավնին թռչում, հեռանում է: Դա ճիշտ է: Նա չի կարող դա հանդուրժել: Նրա բնությունն ուրիշ է: Ո՛հ, Նա ընդհանրապես չի կարող դա հանդուրժել: Եվ դուք գնում եք բամբասելու ձեր հարևաններից: Նա չի կարող դա հանդուրժել: Նա պարզապես չի հաշտվի դրա հետ: Նա պարզապես թռչում, հեռանում է: Նա այլևս չի կարող դա հանդուրժել: Աղավնին հեզ է, Աղավնին խոնարհ է և Աղավնին չի կարող իջնել մի բանի վրա, որն Իր բնությունը չունի:

63 Աստված կարող է ձեզ տալ ուրիշ բնություն, լինեք տղամարդ, թե կին, Նա կարող է ձեզ ուրիշ բնություն տալ: Դուք կասեք. «Լավ, Բրանհամ եղբա՛յր, մենք ի՞նչ կարող ենք անել»: Պարզապես նորից գառ դարձեք: Միայն երկու կենդանիներ կարող են հաղորդակցվել իրար հետ, դրանք են աղավնին ու գառը: Աղավնին գառնուկից բացի ոչ ոքի մոտ չի գա: Եվ եթե դուք այծ եք դարձել, ուրեմն վոնդեք այդ հին այծի ոգին ձեր միջից: Դա ճիշտ է: Եթե դու այլ բան ես դառձել, եթե սկսել ես բանսարկու դառնալ, դուրս վոնդիր դա քեզանից:

64 Մի անգամ այստեղ՝ մի քաղաքում, որքան կարող էի եռանդով քարոզում էի և այնտեղ հազարավոր մարդիկ կային: Ես խորանի հրավեր արեցի: Կարծում էի, թե մեղքի բոլոր ասպեկտները մերկացրել եմ, մերկացրել եմ այն ամենը, ինչի մասին մտածում էի: Այդ երեկո՝ հավաքույթը վերջանալուց հետո շատ խստաբարո տիկին մոտեցավ ինձ և ասաց. «Բրանհամ եղբա՛յր, ես շատ ուրախ եմ, որ դուք չկպաք ինձ այսօր»:

Ես մտածեցի. «Նա պետք է, որ իսկական քրիստոնյա լինի»: Նա ասաց. «Դուք այսօր ինձ չկպաք»:

65 Ես նրան ասացի. «Ես, անշուշտ, ուրախ եմ դա լսել, տիկին, դուք պետք է, որ Աստծո արքայությանը մոտ լինեք»: Եվ նա հեռացավ:

66 Այնտեղ մի տարեց տիկին էր կանգնած: Ես հարցրեցի նրան. «Ասացե՛ք, դուք այդ կնոջը ճանաչո՞ւմ եք»:

Նա պատասխանեց. «Այո»:

Ես ասացի. «Նա պետք է, որ իսկական քրիստոնյա լինի»:

67 Նա ասաց. «Բրանհամ եղբայր, դուք այսօր միայն մի թիրախի չկպաք, դա բամբասանքն է: Նա քաղաքի գլխավոր բամբասկոտն է»: Ահա, խնդրեմ, հասկանո՞ւմ եք:

68 Բայց երբ դուք բախվում ենք այդ բաներից մեկի հետ, կարևոր չէ, թե քարոզիչն անդրադառնում է դրան ամբիոնից, թե ոչ, երբ տեսնում եք այդ աշխահիկ մարմնավոր բաները, քանի դեռ համակերպվում եք դրանց հետ, դուք հեռու եք Աստծուց, և Սուրբ Հոգին հեռու կմնա ձեզանից: Ահա թե ինչու հավաքույթները առաջվա նման չեն: Ահա թե ինչու ապաշխարության արցունքները չեն հոսում խորանում այս առավոտ: Ահա թե ինչու հզոր վրանային հավաքույթները չեն անցկացվում երկրով մեկ, որովհետև մենք տրտմեցրել և վոնդել ենք Աստծո հեզ Հոգին: Դա ճիշտ է: Քանի դեռ մենք այդքան անտարբեր ենք, մեջքի հետևում այդքան չարախոս ենք, Նա մեզ հետ չի մնա: «Մենք մեր ծևով ենք ուզում»:

69 Այժմ ուզում եմ ուշադրություն դարձնեք՝ այդ Գառնուկը լուռ Գառնուկ էր: Աստվածաշունչն ասում է. «Նա իր բերանը չբացեց, և ինչպես ոչխարը մունջ է խուզողների առաջ, այնպես իր բերանը չբացեց»: Նա իր բերանը չբացեց: Նա իր իրավունքները չէր ուզում: Ո՛չ, պարոն, Նա ցանկանում էր հրաժարվել իր իրավունքներից: Նա լուռ Գառնուկ էր:

70 Բայց այսօր, ո՛հ, Աստված իմ, ինչպես ենք ուզում տարբերվել ուրիշներից: Ո՛հ, Աստված իմ: «Ասում եմ քեզ, թող մեկը փորձի ինչ-որ բան ասել ինձ, ես նրան տեղը կդնեմ: «Ես կասեմ այդ պառավ կեղծավորին, երբ տեսնեմ նրան: Դու դեռ սպասիր, մինչև տեսնեմ նրան: Աստված, օրհնի՛ր: Ալելո՛ւիա: Օ՛հ-հո՛»: Աղավնին պարզապես թռչում, հեռանում է: Դա ճիշտ է: Քանի դեռ քո մոտ նման զգացողություն է, Սուրբ Հոգին քեզ հետ չէ: Նշե՛ք դա ձեր նոթատետրերի մեջ, Նա նման բան երբեք չի անի: Սուրբ Հոգին պարզապես չի մնա այնտեղ, որտեղ նման հոգի կա: Դա պետք է գառան հոգի՝ հեզ հոգի լինի, այլապես Նա չի մնա դրա հետ, ահա և վերջ, եթե նա հեզ ու խոնարհ չէ, առաջնորդված Սուրբ Հոգով: Եվ եթե նման բան է տեղի ունենում, Նա պարզապես չի նկատում դա և գնում է առաջ: Հասկանո՞ւմ եք: Հենց այն պահին, երբ

դուք շրջվում եք մի կողմ, իմացեք, հենց այն պահին…երբ դուք շրջվում եք։

71 Դուք գիտեք, որ առաջին մեղքը սկսվեց այն ժամանակ, երբ մարդն ընդամենը մի պահ շրջվեց։ Դուք այդ գիտեի՞ք։ Աստվածաշունչն է այդպես ասում։ Եվան ընդամենը մի պահ շրջվեց, որ լսի, թե սատանան ինչ է ասելու, և նա այնքան գեղեցիկ պատկեր նկարեց նրա համար, որ նա իրականում մտածեց, թե դա Ճշմարտություն է։ Եվ նա լսեց նրան։

72 Եվ միակ բանը, որ սատանան ուզում է, որ դուք անեք, պարզապես մի քանի րոպեյով շրջվելն է։ Նա կարող է պատկերը նկարել, ասել. «Լսի՛ր։ Դու գիտես, եղբայր, գիտես, քույր, եթե նրանք ճիշտ մարդիկ լինեին, նրանք *այս* բանը չէին անի։ Իսկ եթե նրանք *դա* արել են, դու գիտես»։ Սատանան կարող է դա այնքան իրական դարձնել ձեզ համար, մինչև որ իրական ճշմարտություն դառնա։ Դա ճիշտ է։ Բայց հիշե՛ք, դա սատանան է։

73 Ինձ հետաքրքիր չէ, թե որքան ցած են նրանք ընկել, թե որքան են սուզվել մեղքի մեջ, ձեր գործն է գրկել և բարձրացնել նրանց աստվածային սիրով։ Որտե՞ղ էիք դու, երբ Աստծո Աղավնին հանեց քեզ տիղմից։ Դա ձեր գործն է, բարեկա՛մս։ Այս աշխարհը մեռնում է մի փոքրիկ սիրո պակասի պատճառով։

74 Ուզում եմ, որ ուշադրություն դարձնեք այս փոքրիկ կենդանուն, նա լուռ գառնուկ էր, որովհետև նա չ… երբ Նրան վիրավորում էին, Նա ի պատասխան չէր վիրավորում։ Նա չէր կշտամբում, թշնամություն չէր անում, չէր վիճում և չէր զայրանում, Նա նույնը չէր անում։ Երբ ինչ–որ մեկը…Երբ Նրան վիրավորում էին, Նա նույնը նրանց չէր անում։ Նա իր բերանը չէր բացում։

75 Բայց թող մեկն ինձ կամ քեզ մի բան անի, ո՛հ, մենք նոնակ կուլ տված դոդոշի պես պայթում ենք, ծեր բադի նման, նման ուռում ենք։ «Ասում եմ քեզ, նա նորից իմ ոտքը տրորեց, ես այլևս այդ հին եկեղեցին ոտք չեմ դնի։ Ո՛չ, պարոն։ Աստված օրհնի՛ր։ Ալելո՛ւիա։ Նազովրեցիներն ինձ կընդունեն, Սրբության ուխտավորները կվերցնեն ինձ իրենց մոտ։ Ալելուլիա։ Վերջ, հերիք է»։ Լավ, Աղավնին հեռանում է։

76 «Գիտե՞ս ինչ։ Եթե այդ նախքին կեղծավորը գնում է այդ եկեղեցի, ուրեմն էլ երբեք ես չեմ գնա այնտեղ։ Օրհնյալ է Տերը։ Ես էլ երբեք չեմ գնա այնտեղ»։ Երբ

այդ հին ոռնացող գայլը այդպես ցնցում է քեզ, Աղավնին թռչում, հեռանում է: Այդպես է: Այն ժամանակ Սուրբ Հոգին հեռանում է:

77 Հետո զարմանում ես, թե ինչ է հետդ կատարվում: Զարմանում ես, թե ինչ է կատարվում եկեղեցու հետ: Զարմանում ես, թե ինչ է կատարվում քեզ հետ: Ինչո՞ւ առաջվա պես հաղթանակ չունես: Որովհետև դու փոխել ես քո բնությունը՝ գառան փոխարեն այծ ես դարձել: Էլի ինչ–որ բան ես դարձել, գառնուկից բացի:

78 Դուք պետք է այդ իսկական հեզ Հոգին ունենաք. «Թող Սուրբ Հոգին առաջնորդի ինձ ուր որ գնամ: Ո՛վ Աստված, ես սիրում եմ յուրաքանչյուր մեղավորին, որտեղ էլ որ լինեն, կապ չունի»: Եթե նմանը տեղ գրավի ձեր սրտում, այդժամ կտեսնեք, թե ինչ տեղի կունենա ձեր հոգու մեջ:

79 Դուք կասեք. «Եղբա՛յր Բրանհամ, դրան որևէ լուծում կա՞»: Այո, պարզապես գառ դարձիր, ահա և վերջ: Դուք կասեք. «Լավ, եղբայր Բրանհամ»:

80 Մի երեկո Ծրիվպորտում երիտասարդ մի տիկնոջ հանդիպեցի: Հավաքույթը վերջանալուց հետո Բիլլին ու ես մի տեղ գնացինք սենդվիչ գնելու: Այնտեղ սիրուն հագնված մի գեղեցիկ կին մտավ, ավելի ճիշտ երիտասարդ աղջիկ էր, կլիներ մոտ քսան տարեկան: Նա նստեց: Ես նկատեցի, որ նա ճանապարհի կողմն է նայում: Ես պարզապես շարունակում էի ուտել: Մի քանի րոպե հետո մի տիկին ներս մտավ: Նա հարցրեց նրան. «Ո՞նց ես»: Ես այդ կնոջը ճանաչում էի, դա քույր Դեվիսն էր այդ կողմերից: Երկուսին էլ Լայֆ խորանից էին, ես լավ էի ճանաչում նրանց, այդ կինը մոտեցավ և խոսեց ինձ հետ: Այնուհետև առջևում նստած երիտասարդ կինն ասաց. «Եղբա՛յր Բրանհամ այս եկեկոյի պատգամը լավն էր»:

81 Ես ասացի. «Բարև ձեզ, քո՛ւյր,— ասացի,— անչափ շնորհակալ եմ»: Ես հարցրեցի նրան. «Դուք Լայֆ խորհանի անդա՞մ եք»:

82 Նա ասաց. «Այո»: Նա ասաց. «Գիտե՞ք, եղբայր Բրանհամ, ես կարող էի երգել երգչախմբում, բայց նրանք սահմանափակումներ են անում այնտեղ: Ո՛հ, ես բազմաթիվ տարիներ վոկալով եմ զբաղվել և նման բաներով, ես մենակատարի առանձին պարտիաներ եմ երգել, և այս ինչ բաներն եմ երգել: Բայց ես, ես չեմ կարող երգել երգչախմբում, որովհետև նրանք, նրանք

սահմանափակումներ ունեն, ասում են, որ տաբատ կրող ոչ մի կին չի կարող երեգել երգչախմբում»:

Ես նրան ասացի. «Լավ, փառք Աստծուն Լայֆ խորնահի համար»:

83 Նա ասաց. «Ես ասում եմ ձեզ, եղբայր Բրանհամ, ես քրիստոնյա եմ»:

84 Ես նրան ասացի. «Այդ դեպքում, քո՛ւյր, գնացե՛ք տուն և լվացե՛ք ձեր դեմքը: Ուզում եք ինձ ասել, որ դուք ձեզ թույլ կտաք նման չնչին բան, ինչպես այդ հին նյութը քսեք ձեր դեմքին...»:

85 Ես կարող եմ ձեզ ապացուցել, որ դա գալիս է սատանայից: Ես կարող եմ ապացուցել, որ ոչ մի բան... Դա սկիզբ է առել հեթանոսներից: Քանի դեռ դուք դա կրում եք, հեթանոսական նշան է: Նոր եմ վերադարձել Աֆրիկայից, ես եղել եմ Հոթենթի ջունգլիներում և ստույգ պարզել եմ, թե որտեղից են ականջօղները և բոլոր այդ բաները, և ձեր վզից և ականջներից կախված այդքան զարդերը և նման բաները գալիս: Դա հեթանոսական է: Իսկ Աստվածաշունչը չի ուզում, որ քրիստոնյան հեթանոս լինի: Դուք էլ չեք ուզում...Ես չեմ ասում, որ անում եք դա, ուրեմն հեթանոս եք, բայց դուք ձեզ նմանեցնում եք նրանց: Դա այն պատճառով է, որ ձեր հովիվը ձեզ չի ասում Ճշմարտությունը: Աստվածաշունչն է այդպես ասում:

86 Իսկ դուք կասեք հիմա. «Եղբա՛յր Բրանհամ, կարճ մազերով ավելի հով է, և նման բաներ»: Ճիշտ է, բայց եթե երկար մազ ունենաք, ավելի հով կզգաք ձեզ: Ձեր մազերը կբարձացնեք, կհավաքեք վերև, և դա ամբողջությամբ կբացի ձեր պարանոցը:

87 Մի՞թե դուք չգիտեք, թե ինչ է ասում Աստվածաշունչը: Եթե կինը կտրում է իր մազերը, ամուսինն իրավունք ունի թողնել և բաժանվել նրանից: Եթե կտրում է մազերը, դա ցույց է տալիս, որ նա հավատարիմ չէ իր ամուսնուն: Աստվածաշունչն է այդպես է ասում Ա Կորնթացիս 12–րդ գլխում, պարզե՛ք արդյո՞ք դա այդպես չէ: Նա, որ...Մի կին, ով կտրում է իր մազերը, անարգում է իր գլուխը, որն իր ամուսինն է: Եվ եթե նա անարգում է, պետք է բաժանվել, թողնել նրան: Դա ճիշտ է: Բայց հասկանում եք, հովիվն այս բաները ձեզ երբեք չի ասում: Այդ է պատճառը, որ անում եք այն, ինչ անում եք: Եվ, և տղամարդը, Աստվածաշունչն ասում է...

88 Վերջերս ինչ-որ մեկն ինձ նամակ էր ուղարկել, որտեղ ասում էր. «Բրանհամ եղբայր, այդ վերնաշապիկները, որ կանայք հագնում են,— ասում էր,— չէ՞ որ այնպիսի... գրեթե անհնար է գտնել նորմալ վերնաշապիկներ, արյդո՞ք մեզ՝ քրիստոնա կանանց համար նորմալ կլինի, եթե հագնենք այս դակրոնները, նեյլոնները և նման բաներ»։

89 Ասացի. «Տե՛ս, քույր, մի բան կա դրա վերաբերյալ։ Մի բան կա, որ հաստատ է։ Դու կարող ես այսպես անել՝ եթե չես կարող գնել, ապա կարի մեքենաներ են վաճավոռում, ինքդ կարող ես կարել»։ Ասացի. «Դա ճիշտ է։ Որ նման լինի...»։ Կարծում եմ...Դուք գիտեք, ինչ-որ ձեր սրտում է, դա էլ արտահայտում է իրեն։ Ձեր գործելակերպն ու վարվելակերպը ցույց են տալիս, թե ինչ է ձեր մեջ։

90 Դա է պատճառը բոլոր ոռնոցների, վեճերի, չարախոսությունների, խայթոցների և անզսպվածության եկեղեցու մեջ, ահա թե ինչն է քանդում եկեղեցին։ Դա ցույց է տալիս, որ դևը մտել է քո մեջ և Սուրբ Հոգին լքել է քեզ։ Ես գիտեմ, որ դա ձեզանից «ձյութը այրում է», բայց հենց դա էլ պետք է լինի։ Պետք է։ Դրա համար էլ դա ասվեց, ոչ թե խելացի և սրամիտ թվալու համար, այլ ձեզ ասելու, թե ինչում է խնդիրը, որովհետև ես մի օր կանգնելու եմ և պատասխան եմ տալու ձեզ համար։ Դա է պատճառը ձեր գործելակերպի և վարվելաձևի, դա ցույց է տալիս, թե ով եք դուք։ Եթե դու պարզապես հին բնույթն ունես, ուրեմն հեշտությամբ կորցնում ես հավասարակշռությունդ և գալիս ես այստեղ վիճում, կամ քննադատում, կամ անվայելուչ բաներ խոսում, դա ցույց է տալիս, թե որտեղից է այդ ամենը գալիս։

91 Միայն մի բան հնարավոր է անել՝ դուրս հանել դա այնտեղից, և Աղավնին կվերադառնա ձեր սիրտը։ Երբ Աղավնին տապանից դուրս եկավ, նրան դուրս հանեցին, բայց նա վերադարձավ և թակեց տապանի դուռը, մինչև Նոյը ներս թողեց նրան։ [Եղբայր Բրանհամը թակում է ամբիոնը։ Ծան. Խմբ.]։ Սուրբ Հոգին այստեղ է, Նա ուզում է ներս մտնել։ Դրա համար Սուրբ Հոգին այսօր ընդմիշտ չի հեռացել քեզանից։ Նա պարզապես ինչ-որ տեղ՝ ծառի ճյուղերին նստած է, պատրաստ հետ թռչելու, մտնելու ձեր մեջ և տալու ձեզ սեր, խաղաղություն և ուրախություն, որը նախկինում ունեիք։ Անկասկած։ Նա պատրաստ է դա անել։ Նա ցանկանում է դա անել։ Նա փափագում է դա անել, բայց դու թույլ չես տալիս, որ անի դա։

92 Ես հիմա չեմ դիմում ձեզ՝ օտարականերիդ: Ես չգիտեմ, թե ձեր հովիվը...Ես դիմում եմ Բրանհամի խորանին: Ես դա չեմ ասում ուրիշ եկեղեցուց եկած մարդկանց: Ես դիմում եմ Բրանհամի խորանին: Ահա թե ինչում է խնդիրն այստեղ:

93 Ահա թե ինչն է ստիպում Աղավնուն թռչել, հեռանալ: Պարզապես թույլ տուր եկեղեցում, որ ինչ-որ մեկը մի փոքր բան սկսկի խոսել եկեղեցու մասին, և առաջինը, ինչ լսում ես. «Ո՜հ, Իրո՞ք նման բան է արել: Ո՜հ...Դու վստա՞հ ես»: Հենց այդ պահին Սուրբ Հոգին գնում, հեռանում է: Նա պարզապես չի կարող նման տեսակ հոգուն հանդուրժել: Հենց գառան այդ բնությունը լքում է քեզ, այդժամ Սուրբ Հոգին հեռանում է: Դա ճիշտ է: Ահա թե ինչումն է խնդիրն այսօր: Ահա թե ինչու են մարդիկ գտնվում այն վիճակում, որում են, որովհետև թույլ են տալիս սխալ հոգին մտնի իրենց սիրտ, իրենց կյանք: Ահա թե ինչու մենք ունենք...

94 Աստվածաշունչն է ասում, որ դրա համար էլ ձեր մեջ այդքան շատ հիվանդներ ու տկարներ կան: Մենք պետք է քաղցր լինենք: Մենք պետք է խաղաղ լինենք: Մենք պետք է գառ լինենք, որպեսզի Աղավնին կարողանա բնակվել մեզ հետ:

95 Այժմ հիշե՛ք՝ Աղավնին գալու է: Դուք ասում եք. «Ո՜հ, Բրանհամ եղբայր, ինձ մի՛ ասեք, որ ես երբեք չեմ ստացել Սուրբ Հոգին: Ալելո՜ւիա: Մի գիշեր, երբ Նա ներս մտավ, ես պարզապես կարողանում էի քայլե...լ»: Անկասկած, դա Նա էր: «Ո՜հ, ես այնքան լավ էի ինձ զգում, զգում էի, որ կարծես կարող եմ ծառից ցանկացած փոքրիկ թռչուն վերցնել, կրծքիս սեղմել և սիրել: Ամենաչար մարդը, ով ոչինչ չէր արել ինձ համար, զգում էի, որ կարող եմ փաթաթվել և գրկել նրան: Ո՜հ, Բրանհամ եղբայր, ինչպե՜ս էի ես ինձ զգում»: Անկասկած, դա Սուրբ Հոգին էր:

96 Բայց տե՛ս պատճառը, թե ինչու Նա չկարողացավ բնակվել քո մեջ: Այն ժամանակ դու գառ էր, բայց երբ գայլ դարձար, Նա ստիպված եղավ թռչել, հեռանալ: Խնդիրը ոչ թե Աղավնու, այլ քո մեջ է և...դու թույլ ես տալիս, որ այդ ոգին մոտենա քեզ: «Ե՞ս եմ թույլ տվել դա, Բրանհամ եղբայր»: Այո՛, երբ գնացիր այդ բամբասանքը լսելու, երբ քո ականջը բացեցիր ստին, երբ սկսեցիր ասել. «Լավ, ես իրավունք ունեմ»:

97 Դու ոչ մի իրավունք էլ չունես: Դու գնված ես մի գնով, դա Աստծո Որդու թանկագին Արյան գինն էր:

Օրինական ոչ մի իրավունքներ դու չունես: Ալելո՛ւիա: Միակ իրավունքը, որ ունես, այն է՝ գալ Էմմանուելի երակներից քաշված Արյունով լցված շատրվանի մոտ, որտեղ մեղավորները ընկղմվելով, կորցնում են մեղքի բոլոր հետքերը: Այո՛, պարո՛ն: Դա է միակ իրավունքը, որ դու ունես, այն է՝ հանձնել քո կամքը Աստծուն, և այսուհետ Աստված կառաջնորդի: Այդ պատճառով է, որ հավաքույթները...Այդքան տարօրինակ բաների պատճառը դա է: Սուրբ Հոգին կգնա այդտեղ, Սուրբ Հոգին ասաց. «Սա սխալ է: Դադարեցրո՛ւ հավաքույթը, գնա առաջ»: Ես կդադարեցնեմ, եղբայր, և կգնամ առաջ: Դա ճիշտ է, որովհետև դու պետք է առաջնորդված լինես Սուրբ Հոգով: Սուրբ Հոգով առաջնորդվելու միակ միջոցնը հեզություն պահելն է և շատ բան չիմանալը:

98 «Ո՛հ,— մտածում եք դուք,— ես խիստ շատ գիտեմ»: Այո՛, դու այնպես ես աշխատացրել ուղեղդ, որ նա այլևս չի կարող ինքնուրույն աշխատել: Կարդացել ես բոլոր գրքերը, գիտես բոլոր պատասխաններն ու ամբողջ հունարեն և երբայերեն լեզուները, և Սուրբ Հոգու նստելու համար տեղ չունես: Դա ճիշտ է: Բայց եթե դու ամեն բան գիտես, ապա Աղավնին չի կարող առաջնորդել, որովհետև դու չափից շատ գիտես:

99 Գառնուկը չի պնդում, որ ոչինչ չգիտի: Ինչ-որ մեկը պետք է առաջնորդի նրան: Փա՜ռք: Ահա: Ոչինչ չիմանալ: Ամեն: Միակ բանը, որ գիտեմ, Հիսուս Քրիստոսը մահացավ ինձ փրկելու համար:

100 Կալիֆոռնիայով երիտասարդ մի տղա էր անցնում, նա իր դիմաց ցուցանակ էր կախել, որի վրա գրված էր. «Ես հիմար եմ Քրիստոսի համար», իսկ հետևում գրված էր. «Իսկ դու ո՞ւմ հիմարն ես»: Դա ճիշտ է: Հիմար ես դառնում աշխարհի համար, որ կարողանաս առաջնորդված լինել Սուրբ Հոգով, որովհետև Աստծո որդիներն ու դուստրերը առաջնորդվում են Սուրբ Հոգով: Հռոմեացիս 8:1-ում ասվում է. «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսումը լինողների համար, որ մարմնավորապես չեն վարվում, այլ հոգևորապես», քայլում են ոչ թե գայլի հետևից, այլ Աղավնու: Ամե՛ն:

101 Դոկը սովորություն ուներ երգելու. «Ամեն օր ճամփաս լցրու Քո սիրով, երբ քայլում եմ Աղավնու հետ երկնային, թող քայլեմ անվերջ երգելով, ժպիտը շուրթերիս, ամեն օր ճամփաս լցրու Քո սիրով»: Ի՜նչ խաղաղ օր կլինի Բրանհամի խորանի, կամ ցանկացած այլ եկեղեցու կամ

ցանկացած անհատի համար, երբ նրանք հրաժարվեն իրենց իրավունքներից, որպեսզի գառ դառնան։

«Ինչո՞ւմն է խնդիրը, Բրանհամ եղբայր»։

102 Վերադարձի՛ր գառնուկին, վերադարձի՛ր հեզությանը, վերադարձի՛ր ոչինչ չիմանալուն, վերադարձի՛ր պարզապես քեզ Քրիստոսին հնազանդեցնելուն։ Մի՛ փորձիր, մի՛ փորձիր ինչ–որ բան իմանալ։ Պարզապես քայլիր խոնարհ, հանդարտ, հեզ, և Աղավնին կառաջնորդի քեզ։ Բայց երբ տեսնում ես... ականջ ես դնում բամբասանքին, թույլ ես տալիս, որ ջղայնությունը քեզ տիրի, երբ մտածում ես, որ իրավունք ունես *այս* կամ *այդ* բանն անելու, Աղավնին պարզապես թռչում, հեռանում է։ Այդ ժամանակ դու Նրան այլևս չունես։ Այս առավոտ Նա շատ հեռու չէ քեզանից, եկեղեցի՛, Նա նստած է ուղիղ այնտեղ՝ խաղաղության ճյուղի վրա, և սպասում է քո բնության փոփոխմանը։ Ամեն։

103 Այն ամենը, ինչի կարիքը դուք ունեք այսօր, սա է՝ հրաժարվել ձեր բոլոր իրավունքներից, թույլ տալ, որ Աստված պառկեցնի և խուզի ձերանից ձեր բոլոր իրավունքները։ Ամեն։ Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպես է ծեր ոչխարի վրա այդ ամբողջ, ամբողջ բուրդը կախված։ Դա է նրա իրավունքը։ Այո։ *«Հևոց, հևոց, հևոց»։* Թեթևացնում և հետո միայն դնում են խուզելու համար նախատեսված սեղանի վրա։ Նրանք գիտեն, թե ինչն է լավագույնը նրա համար։ Վերցրեք նրա բոլոր իրավունքները և խուզեք դրանք, որքան հովացած և թեթևացած է նա վազում։ Ո՛հ, նա երջանիկ է, ցատկում է շուրջը, ինչ հրաշալի ժամանակ է։ Այո՛, պարոն։ Եթե հրաժարվես քո իրավունքներից, ահա թե ինչ դու կստանաս։ Բայց դու պետք է հրաժարվես քո իրավունքներից և թույլ տաս, որ Աստծո Խոսքը սափրի ողջ աշխարհը քո վրայից, հեռացնի աշխարհի բոլոր սովորությունները, և դու նոր արարած կդառնաս Քրիստոսի մեջ։

104 Մի անգամ Աֆրիկայում տարեց մի սրբի հետ էի զրուցում, ով ասաց. «Բրանհամ եղբա՛յր, ես գիտեմ, որ դուք գերբնական բաներին հավատում եք»։

Ես ասացի. «Իհարկե, եղբայրս»։

105 Նա ասաց. «Տարիներ առաջ ես մտածում էի, թե մի բան եմ,— ասաց,— կարծում էի, որ ես իրոք քրիստոնյա եմ»։ — Հետո, եկեղեցի գնալուց...պետք է բլուր բարձրանայի,

որտեղ մեքենաս էի կանգնեցրել։ Ես պետք է մոտ երեք կամ չորս հարյուր յարդ բարձրանայի բլուրով՝ շրջանցելով թփերը և նման բաներ, և բարձրանալ,— ասաց,— մենք այնտեղ աղոթքի ժողով ունեինք։ Ես կարծում էի, թե ես իսկական քրիստոնյա եմ։ Ես գիտեի ամբողջ Աստվածաշունչը, ուսունասիրել էի ողջ եբրայերեն լեզուն։ Սովորել էի բառերի ճիշտ արտասանությունը։ Ով էլ մոտենար ինձ, ես կարող էի,— [Բրանհամ եղբայրը մատներով ճտտացնում է։ Ծան. Խմբ.],— խոսել նրանց հետ Աստվածաշնչի մասին։ Ես գիտեի, թե ինչի մասին էի խոսում։ Մի երեկո ես գնում էի եկեղեցի։ Մեր եկեղեցում մի շարք կոնֆլիկտներ կային։ Իրար դեմ փոքրիկ խմբեր կային։ Գիտեք՝ ինչպես են դրանք առաջանում»։

Ասացի. «Այո՛, պարոն»։

106 Նա ասաց. «Ես գնում էի ճանապարհով դեպի այդ բլուր, և հանկարծ զգացի, որ ինչ-որ մեկը գաիս է իմ հետևից»։ Ասաց. «Ես մտածեցի, որ ով էլ լինի, ես մի փոքր կսպասեմ նրան, և մենք զրուցելով կբարձրանանք»։ Դուք գիտեք, դա լավ բան է, պարզապես մի փոքր սպասել։ Եվ նա ասաց. «Մինչ ես բլուրով բարձրանում էի,— ասաց նա,— ես մոտեցա։ Մի Մարդ բարձրանում էր բլուրով,— ասաց նա,— Նա իր մեջքին մի մեծ կապոց էր տանում, ավելի մեծ, քան Մարդը»։ Եվ ասաց. «Այդ մարդը շնչակտուր էր լինում և դժվար էր շնչում, և բարձրանալիս փորձում էր քայլերը դանդաղեցնել։ Ես ասացի. «Տղա՛, կարո՞ղ եմ քեզ օգնել այդ բեռը բլուրով բարձրացնել»։ Նա ասաց. «Ո՛չ, ես պետք է դա տանեմ»։ Ասաց. «Ես նայեցի Իր ձեռքերին,— ասաց նա,— այնժամ հասկացա, որ դա տեսիլք է։ Նա Իր ձեռքի վրա սպիեր ուներ»։ Ասաց. «Ես ընկա ծնկներիս վրա և ասացի. «Տե՛ր, Դու աշխարհի մեղքերն ես կրում այդ պարկի մեջ»։ Նա ասաց. «Ո՛չ, միայն քո մեղքերն եմ տանում։ Ուղղակի օգնում եմ քեզ բարձրանալ այս բլուրը, որ կարողանաս բարձրանալ»։

107 Ահա թե ինչպես։ Եթե մենք պարզապես շրջվեինք, կտեսնեինք, որ Նա տանում է մեր մեղքերը։ Դրանից ձեզ փոքր չեք զգո՞ւմ։ Մեր սիրտը չար ու դաժան է, միայն այն պատճառով, որ անում ենք դա։

108 Մի անգամ ես որսորդություն էի անում։ Ինչպես գիտեք, ես սիրում են որսորդություն անել։ Եվ այնտեղ մի չարաճճի տղա կար, չար տղա էր։ Նա սովորություն ուներ ինձ ծաղրելու, որովհետև ես էգ եղնիկներին և ձագերին չէի կրակում։ Ես ասում է, որ դա դաժան է։

Ասում էի. «Ինչո՞ւ չես ուզում իսկական, մաքուր որսորդ լինել և կրակել ծեր եղջերուներին և մյուս ծերացած կենդանիներին, որոնք սատկելու վրա են: Աստված է մեզ տվել նրանց: Բաց թող նրանց երիտասարդ մայրերին...»:

109 Ասաց. «Ո՛հ, դու փափկասիրտ քարոզիչ ես»: Այդպես էր ինձ ասում:

110 Ասացի. «Տե՛ս, եթե ես քաղցած լինեի և ինձ եղջերու պետք լիներ, կարծում եմ, որ Աստված դա կտար ինձ: Բայց կրակել զուտ նրա համար, որ ցույց տաս, թե որքան դիպուկ ես», նա մի վագոն կլցներ: Եվ նա գնաց և սրինկգ պատրաստեց, շվիկի նման, և նա կարողանում էր սուլել և ձայն հանել ճիշտ այնպես, ինչպես եղջերուն է կանչում: Մի օր մենք թփերի մեջ միասին էին: Ես ամոթանք տվեցի նրան, ասացի. «Ես քո փոխարեն կամաչեի»: Եթե հաջողացնում էր, միանգամից ութ կամ տաս եղջերուներ և ծագեր էր սպանում, պարզապես ճարպկության համար, հետո գուցե միայն հետևի մասը կտրեր, իսկ մնացածը թողնում էր այնտեղ: Ես ասացի, որ այդպես չպետք է անել:

— Ո՛հ,— ասաց նա,— դուք քարոզիչներդ չափազանց փափկասիրտ եք:

111 Մի օր նա կանգնեց թփերի մեջ, վերցրեց այդ սուլիչը և սկսեց սուլել, դա սուլում էր այնպես, կարծես եղջերուի ձագուկն էր կանչում: Հենց որ նա այդ ձայնը հանեց, գեղեցիկ մի եղնիկի գլուխը երևաց, նա դուրս էր գալիս անտառից: Միայն տեսնեիք նրա խոշոր շագանակագույն աչքերը: Նա վախեցած էր: Նայում էր շուրջը: Որսորդը ոտքի կանգնեց, պարզեց հրացանը, որ կրակի: Եղջերուն տեսավ որսորդին: Բայց գիտե՞ք ինչ, ձագի այդ աղաղակի պատճառով նա ուշադրություն չէր դարձնում այդ հրացանին: Նա փնտրում էր ծագուգին, որը վտանգի մեջ էր: Գիտե՞ք, դա ցույց է տալիս իսկական մայրությունն ու մայրական սերը, նա դեմ առ դեմ հանդիպեց մահվանը, նայելով այդ հրազենի փողաբերանի միջով: Գիտե՞ք ինչ, այդ տեսարանը այնքան հիանալի էր, եղջերում անցավ նրա կողքով, նա իջացրեց հրացանը: Տեսնելով մայրական հերոսական այդ դրսևորումը, նա ետ վազեց, բռնեց իմ ձեռքը և ասաց. «Բիլլի՛, աղոթի՛ր ինձ համար, ես այլևս չեմ կարող»:

112 Ո՛հ, երբ աշխարհը տեսնի աստվածային սիրո դրսևորումն ու սիրալիությունը մեր սրտերում, ի՞նչ

տարբերություն կլինի։ Երբ թույլ տանք, որ Աստծո Աղավնին գա մեր սրտերի մեջ և խոնարհ ու հեզ դարձնի մեզ։

113 Այնտեղ, այդ թփի հետևում, ես կանգնած աղոթեցի այդ տղայի համար, ես նրան առաջնորդեցի դեպի Տեր Հիսուսը։ Այդ ժամանակից ի վեր նա բարի, մաքուր որսորդ էր։

114 Անշուշտ, նա կարծում էր, որ իրավունք ունի անելու այն, ինչ ուզում է։ «Նրանք իմ տարածքում են և ուտում են իմ արտից, երբ ուզում են»։

115 Ասացի. «Ճիշտ է, բայց այդպես վարվելը անմարդկային է»։ Դուք պետք է հրաժարվեք ձեր իրավունքներից։ Ո՛վ Աստված, ողորմություն արա, որ մենք կարողանանք դա անել։

116 Մի անգամ այստեղ, ո՛հ, մոտ հարյուր տարի առաջ, Միացյալ Նահանգների հարավ—արևմուտքում Դանիել Քարրի անունով մի հզոր քրիստոնյա է լինում, հրաշալի, բարեպաշտ, սուրբ մարդ, իսկական քրիստոնյա, մի մարդ, որի մասին բոլորը բարձր կարծիք ունեին, այդքան հրաշալի անձնավորություն էր։ Պատմությունը այն բանի մասին է, որ նա մահանում է կամ ընկնում է տրանսի մեջ և նա ասում է...երբ գնում է երկինք, իհարկե, երբ մահանում է։ Երբ հասնում է մարգարտե դարպասների մոտ, պահակը մոտենում է դարպասին և հարցում է. «Դու ո՞վ ես»։

117 Նա ասում է. «Ես ավետարանիչ՝ Դանիել Քարրին եմ։ Ես հազարավոր հոգիներ եմ շահել Քրիստոսի համար։ Եվ ես...Ես ուզում եմ ներս մտնել այսօր։ Իմ կյանքի ճանապարհորդությունն երկրի վրա ավարտվել է, և հիմա ես գնալու տեղ չունեմ»։

118 Մի օր էլ դու ես դրան այդպես բախվելու՝ մեղավո՛ր։ Այդպես էլ դու ես դրան բախվելու՝ հավատքից հեռացած մարդ։ Այդպես էլ դու ես բախվեու դրան, որ տրտմեցրել և վահել ես Սուրբ Հոգուն, որ կորցրել ես հեզությունն ու քաղցրությունը։ Դուք երկար տարներ է չեք լալիս։ Չգիտեմ երբվանից չեք ամաչում։ Ողջ համեստությունը հեռացել է ձեզանից։ Անկասկած։ Բայց օրերից մի օր սա մոտենալու է ձեր դռանը։ Եվ երբ քաղցր Սուրբ Հոգին գալիս և թակում է, ինչո՞ւ պարզապես Նրան ներս չեք թողնում։

119 Եվ այսպես, երբ Դանիել Քարրին մոտեցավ դարպասներին, նրանք ներս մտան, ասաց. «Հիմա կտեսնենք, թե արդյո՞ք քո անունն այստեղ կա»։ Նրանք ամեն տեղ նայեցին, բայց ոչ մի անուն չգտան։ Ասաց. «Ո՛չ, Դանիել Քարրի անունը այստեղ գրված չէ»։

120 «Ո՛հ,— ասաց նա,— վստա՞հ եք։— Ես ավետարանիչ եմ,—ասաց,— ես հոգիներ եմ շահել Քրիստոսի համար»։ Ասաց. «Ես ջանացել եմ անել այն, ինչ ճիշտ է»։

121 Պահակն ասաց. «Պարո՛ն, ցավում եմ այս բանը ձեզ հայտնելու համար, բայց Դանիել Քարրի անունն այստեղ չկա»։ Ասաց. «Ես ձեզ կասեմ, թե դուք ինչ կարող եք անել»։ Ասաց.—Մենք այստեղ իրավունք չունենք ձեր գործը քննելու։ Ուզո՞ւմ եք բողոքարկել ձեր գործը։ Եթե ուզում եք, կարող եք բողոքարկել այն Սպիտակ Գահի Դատաստանի առջև»։ Բայց ասաց. «Այստեղ մենք չենք կարող ողորմություն անել ձեզ, ամենևին, որովհետև ձեր անունն այստեղ չկա։ Ձեզ համար այստեղ ողորմություն չկա»։ Ասաց. «Արդյո՞ք ցանկանում եք ձեր գործը բողոքարկել»։

Նա ասաց. «Պարո՛ն, ի՞նչ կարող եմ անել բացի բողոքարկելուց»։

122 Ասաց. «Այդ դեպքում կարող եք գնալ Սպիտակ Գահի Դատաստանի առջև և բողոքարկել ձեր հայցն այնտեղ»։

123 Դանիել Քարրին ասաց, որ նրան թվում էր, թե նա մոտ մեկ ժամ անցնում էր տարածության միջով։ Ասաց, որ նա ընկավ մի տեղ, որտեղ գնալով ավելի ու ավելի, ավելի ու ավելի լուսավորվում էր։ Որքան մոտենում էր, այնքան ավելի ու ավելի լուսավորվում էր։ Այն հազար անգամ, հազարավոր անգամներ ավելի լուսավոր էր, քան արևն է շողում։ Եվ ասաց, որ նրա մարմինը դողով էր բռնվել, դողում էր։ Ասաց, որ հայտնվելով այդ Լույսի մեջ, մի Ձայն լսեց, որն ասաց. «Դու երկրի վրա կատարյա՞լ ես եղել»։ Պարզապես դա հնչում էր այդ Լույսի միջից։

Նա դողալով պատասխանեց. — Ո՛չ, կատարյալ չեմ եղել։

— Միշտ ազնի՞վ ես եղել բոլորի հանդեպ։

124 — Ոչ։ (ասաց. «Ես մի քանի դեպքեր հիշեցի, երբ այդքան էլ ազնիվ չեմ եղել)։ — Ոչ, ես, ես, ես կարծում եմ, որ ազնիվ չեմ եղել։

— Կյանքիդ բոլոր պարագաներում ճի՞շտն ես ասել։

125 — Ո՛չ: Ես հիշեցի մի քանի դեպքեր, որ ասել եմ ոչ այդքան...ինչը կասկածելի էր: Ես, ես, ես, ես այնքան էլ ազնիվ չեմ եղել:

126 — Երբևէ վերցրե՞լ ես ինչ-որ բան՝ դրամ կամ ուրիշ մի բան, ինչը քեզ չի պատկանել, քոնը չի եղել:

127 Ասաց, որ կարծում էր, թե երկրի վրա բավականին լավ մարդ է եղել, բայց նա հանդիմանվեց: Ասաց. «Ո՛չ, ո՛չ, ես վերցրել եմ որոշ բաներ, որոնք ինձ չեն պատկանել»:

— Ուրեմն, դու կատարյալ չես եղել:— Ո՛չ, ես կատարյալ չեմ եղել:

128 Պատմում էր, որ մի րոպե սպասեց, որ այդ հզոր Լույսի միջից, որտեղ Աղավնին էր հանգչում, կինչի. «Դատապարտված է»: Ասաց, որ հենց այդ պահին նա մի Ձայն լսեց իր ետևում, որն ավելի քաղցրեր էր, քան մայրական ձայնը, որ նա երբևէ լսել էր: Ասաց, որ նա շրջվեց տեսնելու, թե ով է Նա: Եվ ամենաանուշ դեմքը, որ նա երբևէ տեսել էր, ավելի անուշ, քան մայրական դեմքն է, կանգնած էր իր առջև: Եվ ասում է, որ Նա ասաց. «Հա՛յր, Դանիել Քարրին այնտեղ՝ երկրի վրա կանգնել է Ինձ համար: Ճիշտ է նա կատարյալ չի եղել, բայց նա կանգնել է Ինձ համար: Նա երկրի վրա կանգնել է Ինձ համար, այժմ ես Երնքում կկանգնեմ նրա համար: Վերցրո՛ւ նրա բոլոր մեղքերը և դի՛ր Իմ հաշվին»:

129 Ո՞վ կկանգնի քեզ համար այդ օրը, եղբա՛յր, եթե դու այսօր վշտացնում և վանում ես նրան քեզանից: Ես ուղղակի էլ չեմ կարողանում քարոզել: Խոնարհե՛նք մեր գլուխները:

130 Սիրելի՛ Հայր, սիրելի մեռնող Գառնուկ՝ հեզ, խոնարհ, համեստ: Թռչունները բույներ ունեին, աղվեսները՝ որջեր, բայց Դու՝ փառքի Տերը գլուխդ դնելու տեղ չունեիր: Երբ Դու ծնվեցիր, նրանք անգամ քեզ հագցնելու հագուստներ չունեին: Ո՛վ Աստված, ի՞նչ օգուտ ինձ իմ հագուստներից: Ի՞նչ օգուտ ինձ իմ մեքենաներից: Ի՞նչ օգուտ ինձ իմ գեղեցիկ տնից: Ինչ օգուտ է դա տալու այն օրը: Դու միայնակ էիր, ոչ ոք ընկերություն չեր անում Քեզ հետ: Ոչ ոք կարծես չեր ուզում օգնության ձեռք մեկնել քեզ: Դու ասացիր, որ այն օրը կասես. «Ես սովեցի, և դուք Ինձ ուտել չտվեցիք: Մերկ էի, և չհագցրեցիք Ինձ»: Ինչ օգուտ է ունենալու այս ամենն, ինչ մենք ունեք այն օրը, Տե՛ր: Տուր մեզ կանգնել Քեզ համար, որպեսզի երբ որ այն ժամը գա և մենք մտնենք Նրա ներկայության մեջ,

Ամենակարողի, Ամենագոի, Ամենա…Ո՛վ Աստված, երբ լսում ենք այդ Աղավնուն Իր թևերով նստած այնտեղ՝ այդ Հզոր Լույսի մեջ, Այն փայլում է Հավիտենության միջով: Այո՛, Դու բնակվում ես Լույսի մեջ:

131 Երբ ես կանգնեմ այնտեղ…եղբայրս, հովիվս, մայրս, հայրս, կինս, երեխաներս հեռացել են: Ո՛վ Աստված, այդ ժամանակ ես ի՞նչ եմ անելու, Տե՛ր: Ի՞նչ եմ անելու այդ ժամանակ: Իսկ դա կարող է լինել այսօր երեկոյան, նախքան արևի մայր մտնելը: Ի՞նչ եմ անելու ես: Ի՞նչ կարող եմ անել: Ո՛հ Քրիստոս, ես հիմա կկանգնեմ Քեզ համար: Ես այսօր կկատարեմ իմ ընտրությունը: Ես կթողնեմ իմ բոլոր բամբասանքներն ուրիշների մասին: Ես կհրաժարվեմ իմ բոլոր տարբերություններից: Ես կհրաժարվեմ իմ բոլոր տարաձայնություններից: Ես ամեն բանից կհրաժարվեմ: Խուզի՛ր ինձ, Տե՛ր, վերցրո՛ւ այն ամենը, ինչ ունեմ: Պարզապես վերցրո՛ւ ինձ, Տե՛ր: Ես, ես, ես ուզում եմ կանգնել այնտեղ, որտեղ Դու ես: Ես ուզում եմ խուզված լինել: Ես ուզում եմ, որ ողջ եսասիրությունը, ողջ հպարտությունն ու ողջ անտարբերությունը պարզապես վերցվի ինձանից: Այդ ժամանակ ես ուզում եմ կանգնել Քեզ համար՝ որպես խուզված մի գառ, ով ցանկանում է վերջ տալ բոլոր հաճույքներին, որոնք կոչվում են կյանքի հաճույքներ՝ բոլոր այդ պարերը, երեկույթները, բոլոր հին անվայելուչ հագուստները, շպարը, շրտներկը, մանիկյուրը, ողջ այս անտարբերությունը, որոնք այս աշխարհի կերպարն են: Դու ասացիր. «Աշխարհի պես մի՛ վարվեք»: Անգամ մի՛ շփվեք աշխարհի հետ: Դուրս եկեք նրանց միջից: Ո՛վ Աստված, օգնի՛ր ինձ, Տե՛ր: Խուզի՛ր ինձ այսօր: Վերցրո՛ւ ինձ գառան պես և թույլ տուր, որ ես մունջ լինեմ, բերանս չբացեմ, ոչինչ չասեմ դրա մասին, պարզապես կանգնեմ և խուզվեմ:

132 Ո՛վ Աստված, ի՞նչ տարբերություն է դա տալու: Հիշում եմ, երբ մի անգամ ինձ խուզեցիր, վերցրեցիր կնոջս, երեխայիս, հորս ու եղբորս: Դու ինձ մաքուր խուզեցիր, մինչդեռ իմ սրտում ես գիտեի, որ սիրում եմ Քեզ: Ինչքա՜ն Դու ինձ օրհնեցիր: Ինչքա՜ն բարի էիր Դու: Այն ամենը, ինչ ես կամ, այն ամենը, ինչ կարող էի լինել կամ երբևէ կկարողանամ լինել դա Դու ես, Տե՛ր, Դու: Ես խոստովանում եմ իմ սխալները, խոստովանում եմ այն ամենը, ինչ արել կամ մտածել եմ: Պարզապես խուզի՛ր ինձ, Տե՛ր, ես ուզում եմ լինել Քո գառը:

133 Ոչ միայն դա, Տե՛ր, այլ վերցրո՛ւ նաև ամեն մարդու, ով այստեղ է այս առավոտ, ամեն ոչխարի և նրանց, ովքեր կցանկանան ոչխար լինել, խուզի՛ր ամենը նրանց վրայից այսօր, Տե՛ր: Թող նրանց ոտքերը լինեն Ավետարանի հիմքի վրա: Թող Սուրբ Հոգին հենց հիմա առաջնորդի նրանց ապաշխարության, որպեսզի խոստովանեն, որ նրանք անտարբեր են եղել Աստծո հանդեպ: Եվ թող Նա խուզի՛ ողջ անտարբերությունը, ողջ աշխարհն ու աշխարհի բաները: Խուզի՛ր այդ ամենն այս առավոտ, Տե՛ր, որ մենք կարողանանք հովացած և լուռ կանգնել Քո առջև՝ որպես վերստին ծնված քրիստոնյաներ: Շնորհի՛ր այդ, Տե՛ր:

134 Ես սիրում ես Քեզ: Ես ուզում եմ գնալ, կարևոր չէ, թե արդյո՞ք եղանակը շոգ է, թե ոչ, ուզում եմ, թե ոչ: Ես ուզում եմ գնալ: Ես ուզում եմ կանգնել Քեզ համար, որովհետև ուզում եմ, որ Դու այն օրն իմ գործը ներկայացնես, ասես. «Այո՛, Նա կանգնեց Ինձ համար, հիմա էլ Ես կկանգնեմ նրա համար»: Ո՛վ Աստված, շնորհի՛ր դա այսօր:

135 Մինչ ամեն գլուխ խոնարհված է, և ամեն մի սիրտ խոնարհված է: Ես ուզում եմ իմանալ, այս առավոտ այստեղ կա՞ մեկը, ով գիտակցում է, որ փորձել է գնալ իր սեփական ճանապարհով, արել է բաներ, որոնք չպետք է արած լիներ, և այս առավոտ զգում է, որ կուզենար Տերը խուզի իրեն, և ասում է. «Ինձ իսկական գառ դարձու», չէք ուզո՞ւմ բարձրացնել ձեր ձեռքը: Աստված օրհնի ձեզ, տիկին: Աստված օրհնի ձեզ, եղբայր: Աստված օրհնի ձեզ, եղբայր: Էլի՞ ով կասի. «Խուզի՛ր ինձ, Տե՛ր, ահա ես կանգնած եմ»: Ես ոչխար եմ: Ես բերանս չեմ բացելու, ես ընդամենը ուզում եմ, որ Դու աշխարհը խուզես իմ վրայից ամբողջովին»: Աստված օրհնի ձեզ, եղբայր: Աստված օրհնի ձեզ, տիկին: Աստված օրհնի քեզ, որդյակ: Աստված օրհնի ձեզ, տիկին: Աստված օրհնի ձեզ, քույր: Խուզի՛ր ինձ, Տե՛ր: Քո՛ւյր Գերտի: Աստված ձեզ էլ օրհնի, տիկին: Աստված օրհնի ձեզ, քույր: «Խուզի՛ր հիմա ինձ, Տե՛ր: Ես, ես ուզում եմ, որ աշխարհի բոլոր բաները...Ուզում եմ այսօր կանգնել Քեզ համար: Ես ուզում եմ կանգնել որպես խուզված ոչխար: Ուզում եմ, որ աշխարհի բոլոր բաները կտրվեն իմ վրայից: Ես ուզում եմ լինել Քոնը, Դու էլ՝ իմը: Կնդունե՞ս ինձ, Տե՛ր, մինչ ձեռքս բարձրացրել եմ դեպի Քեզ»: Աստված օրհնի ձեզ, տիկին: Աստված օրհնի ձեզ, պարոն: Աստված օրհնի ձեզ: Աստված օրհնի ձեզ, պարոն: Աստված օրհնի ձեզ, պարոն: Աստված օրհնի

ձեզ, տիկին։ Աստված ձեզ օրհնի, տիկին, ես տեսնում եմ ձեր ձեռքերը։ Աստված օրհնի քեզ, եղբայրս։ Աստված օրհնի ձեզ, տիկին։ Դա լավ է։ Աստված օրհնի ձեզ, մայրիկ, որ ետևում եք կանգնած։ Աստված օրհի ձեզ, քույր։ Ճիշտ է, պարզապես ազնիվ եղե՛ք։ Ես ուզում եմ, որ Աստված հեռացնի ինձանից այն ամենը, ինչ նման չէ Նրան, ցանկացած եսասիրական դրթապատճառներ, ցանկացած անտարբերություն, որ ունեմ։ Ուզում եմ, որ Նա ամբողջությամբ խուզի ինձ այսօր։ Ես ուզում եմ լինել Նրա նման։ Ինձ չի հետաքրքրում, արդյո՞ք նրանք իրավունքներ ունեն, թե ոչ, ես ոչ մի իրավունքներ չունեմ։ Ես միայն մի իրավունք ունեք, գալ Նրա մոտ։ Մնացածը իր գործն է։

136 Կա՞ այստեղ մի մեղավոր, որ երբեք ոչ մի անգամ չի դավանել Քրիստոսնին, երբեք փրկված չի եղել, և ուզում է, որ նրան հիշեն այս աղոթքի մեջ այս առավոտ։ Չեք ուզո՞ւմ բարձացնել ձեր ձեռքը, մեղավո՛ր բարեկամ։ Աստված օրհնի ձեզ։ Էլ ո՞վ, բարձրացրե՛ք ձեր ձեռքը, ասեք. «Հիշի՛ր ինձ, Բրանհամ եղբայր։ Ես քրիստոնյա չեմ և չգիտեմ, թե որ ժամին կհանդիպեմ Հիսուսին։ Ես, ես հենց հիմա ուզում եմ, որ ինձ հիշեք այս աղոթքի վերջում»։ Չեք ուզո՞ւմ բարձացնել ձեր ձեռքը, որ աղոթեմ ձեզ համար։ Նա տեսնում է։ Աստված օրհնի ձեզ, տիկին։ Աստված օրհնի ձեզ, տիկին։ Աստված օրհի ձեզ, պարոն։ Էլի՞ որևէ մեկը. «Ես ուզում եմ, որ ինձ...ուզում եմ...»։

137 Քանի՞սն են այստեղ այսօր, որ հեռացել են հավատքից։ «Ո՛հ,— կասեք դուք,— ես դա չեմ խոստովանի, Բրանհամ եղբայր»։ Տե՛ս, եթե այդ հեզության Աղավնին հեռացել է քեզանից, եղբայր, ուրեմն ինչ-որ բան սխալ է։ Ինչ-որ բան այնպես չէ, երբ չեք կարողանում իրար հանդուրժել։ Երբ չէք կարողանում սրտանց ներել բոլորին, կարևոր չէ, թե նրանք ինչ են արել կամ ասել, եթե սրտանց չէք կարող ներել նրանց։ Հիսուսն է ասում. «Եթե դուք մարդկանց իրենց հանցանքները չներեք, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ պիտի չների»։

138 Այժմ, իսկ ի՞նչ կլիներ, եթե այս շոգ եղանակին... ի՞նչ կլիներ, եթե Աստված կանչեր քեզ այսօր։ Մինչ բաց աղբյուր կա, եկեղեցին պատրաստ է, Սուրբ Հոգին նստած է այստեղ՝ այս շինության վերնաճակատին, պատրաստ հենց հիմա իջնելու և հետ վերադառնալու քո սիրտը և քեզ խոնարհ ու խախաղ դարձնելու։ «Ես ի՞նչ պետք է անեմ, Բրանհամ եղբայր»։ Պարզապես գառ դարձի՛ր։

Սուրբ Հոգին իսկույն կիջնի, երբ դու գառ դառնաս։ Բայց եթե դու սխալ շարժառիթներ, սխալ գաղափարներ ունես, ուզում ես քո սեփական ճանապարհով ընթանալ և չես ցանկանում թողնել այն, այդ դեպքում Սուրբ Հոգին երբեք չի գա։

139 Այժմ խոնահված գլուխներով, ուզում եմ իմանալ կա՞ մեկը, ով բարձրացրել է իր ձեռքերը...Հիսուսն ասաց. «Նա, ով լսում է իմ Խոսքերը և հավատում Նրան, որ Ինձ ուղարկեց, հավիտենական կյանք ունի և դատապարտության պիտի չգա, այլ մահից կյանքի է անցել» (Հովհ.5.24)։ Բայց եթե դու հիմա ցանկանում ես մոտենալ խորհանին, ծնկի գալ այստեղ, եկե՛ք միասին աղոթենք, մինչև որ այդ քաղցր, խաղաղ զգացողությունը, որը մի անգամ տիրում էր, կամ կցանկանայիք, որ տիրի, նորից գա ձեզ մոտ։ Շարունակելով մնալ խոնարհված գլուխներով, մինչ երգում ենք՝ *«Կա աղբյուր լցված Արյունով»*, ուզում եմ, որ դուք առաջ գաք, ծունկի իջնեք և աղոթեք։ Ամեն մարդ, ով հիմա ցանկանում է առաջ գալ, ծունկի իջնել այստեղ՝ խորանի մոտ և մի քիչ աղոթել։

Արյունով լցված մի աղբյուր կա,
Որ հոսում է Էմմանուելի երակներից,
Որի մեջ մեղավորներն են սուզվում...

Աստված օրհնի ձեզ, տիկին, մոտեցեք և ծնկի եկեք։

Կորցնում են...

140 Գլուխներդ խոնարհած, ինչպես հուսով եմ ունեք ձեր սրտում։ Դուք գիտե՞ք, թե ով է առաջինը, ով մստեցավ այս առավոտ, արդյո՞ք կամաչացնի դա քեզ։ Սևամորթ խեղճ կինը այտուցված կոճերով, ճերմակ մազերով, գալիս է խորանի մոտ իր ճանապարհով։

141 Մի ժամանակ, ստրկատիրական հասարակարգի ժամանակ, սևամորթ մի տղամարդ փրկվեց։ Եվ քանի որ նա փրկված էր, գնաց և ասաց իր բոսին, որ նա ազատ է։ Բոսն ասաց. «Դու ի՞նչ ես»։

Ասաց. «Ես ազատ եմ»։ Այդ ժամանակ նա իրեն ազատեց։

142 Ահա՛ մարդկանց մեկ այլ խումբ է իջնում ներքև, փրկության համար այս առավոտ։ (Նա ասաց, որ ազատ է)։ Թող ամեն մարդ աղոթքի մեջ մնա և ջերմեռանդ աղոթի, մինչ Սուրբ Հոգին աշխատում է այս մարդկանց հետ, ովքեր որոշումներ են կայացնում։

Բոսն ասաց. «Մոռ՛ւզ, ասում ես՝ աղա՞տ ես»։ Նա ասաց. «Այո՛, պարոն, բոսս։ Ես ազատ եմ»։

143 Բոսն ասաց. «Եթե դու ազատ ես, այդ դեպքում ես էլ եմ քեզ ազատություն տալիս։ Գնա՛, քարոզի՛ր Ավերատարանը»։

144 Երբ նա մահանում էր, նրա սպիտակամորդ եղբայրներից շատերը եկան նրան տեսության, և երբ նրանք եկան, նա ասաց, որ կարծում էր, թե նա կոմայի մեջ է եղել։ Երբ նա արթնացավ՝ ասաց, որ նա կարծում էր, թե մահացել է»։ (Աստված օրհնի ձեզ, եղբայրս, հենց այնտեղ էլ ծնկի եկեք)։ Նա ասաց. «Ես կարծում էի, թե արդեն մահացել եմ»։

Նրանք հարցրին. «Դու ի՞նչ տեսար, Մոռ՛ւզ»։

145 Նա ասաց. «Դարպասների միջով մտնելիս, ես տեսա Նրան,— ասաց,— ես կանգել, նայում էի Նրան»։ — Այնտեղ մի հրեշտակ կար, որը մոտեցավ ինձ և ասաց. «Ներս արի՛, Մոռուզ։ Դու երկար տարիներ Ավետարան ես քարոզել, հանդերձն ու թագը քեզ են սպասում»։ Նա ասաց. «Մի՛ խոսեք ինձ հետ հանդերձի և թագի մասին, ինձ հանդերձ ու թագ պետք չէ։ Ես միայն ուզում եմ Նրան նայել»։ Կարծում եմ, որ ցակնացած քրիստոնյայի վերաբերմունքը դա է։

146 Մի անգամ Չիկագո գնալու ճանապարհին, ես այցելեցի կոլիզեյ, ավելի ճիշտ, թանգարան, և ամեն ինչ ուսումնասիրում էի այնտեղ։ Ես մի սևամորթի տեսա, մի քիչ ճերմակ եզրաշերտերով իր գլխի շուրջ, ով գլխարկը ձեռքին շրջում էր այնտեղ։ Ես հայացքով հետևում էի նրան։ Նա ինչ–որ բանի նայեց, հետո հետ ցատկեց, և արդյունքները սկսեցին հոսել իր կնճռոտած, սև այտերով։ Նա սկսեց աղոթել։ Ես մի որոշ ժամանակ հետևեցի նրան։ Նա նորից նայեց և կրկին սկսեց լաց լինել։ Ես մոտեցա և ասացի. «Պարո՛ն»։

Նա ասաց. «Այո՞, սպիտակամորթ բարեկամ»։

Ես ասացի. «Տեսնում եմ, դուք...Ի՞նչն է ձեզ այդքան հուզել։ Ինչի՞ համար եք այդքան հուզված»։

147 Նա ասաց. «Պարո՛ն, եթե դիպչեք կողիս, կողիս շուրջը մաշկս ամբողջովին չորացած է»։ Ասաց. «Ես մի ժամանակ ստրուկ եմ եղել։ Այստեղ այս ապակե վանդակի մեջ հագուստ է գտնվում»։

Ես ասացի. «Տեսնում եմ, որ հագուստ է, բայց ի՞նչ առանձնահատուկ բան կա դրանում»։

148 Նա ասաց. «Դրա վրայի հետքը,— ասաց նա,— դա Աբրահամ Լինքոլնի արյունն է»: Ասաց. «Այդ արյունը հանեց իմ վրայից ստրկության գոտին: Հիմա, սպիտակամորթ բարեկամ, դա ձեզ էլ չէ՞ր հուզի»:

149 Ես ձեռքերս դրեցի նրա ծեր պարանոցի շուրջ և ասացի. «Աստված օրհնի քեզ, եղբայր: Ես ճանաչում եմ ուրիշ Արյուն, որն հուզում է ինձ»:

Ասաց. «Ես էլ եմ այդ Արյունը ճանաչում, պարո՛ն»:

150 Ասացի. «Նա հանեց իմ վրայից ստրկության գոտին»: Մի ժամանակ ես դուրս էի գալիս կիրակի օրերին, գնում էի ձիարշավների, անվայելուչ կատակներ էի պատմում: Եվ, ո՛վ Աստված իմ, ինչպե՞ս էի ես դա անում: Դեռ իմ սրտում սպիներ կան, այն պատճառով, որ անում էի դա: Բայց ես ուրախ եմ, որ Նա հանեց այդ գոտին իմ վրայից: Հիմա ամեն բան վերացել է: Նա կանգնեց իմ փոխարեն:

151 Այստեղ մի անգամ մի կնոջ էի նայում, նա այնքան գռեհիկ էր, որ ուզեցի հանդիմանել նրան: Բայց Աստված ինձ տեսիլք տվեց: Այդ ժամանակ ես աղոթեցի նրան համար, որովհետև տեսա, որ իմ մեղքերը նույնքան շատ են, որքան նրանը: Ես մոտեցա և նստեցի նրա կողքին, ամոթանք տվեցի նրան, ասացի, որ ծառայող եմ: Նրա երկու ընկերները...Նա մոտ վաթսունհինգ-յոթանասուն տարեկան էր, նրա երկու ընկերները ծնկի եկան այնտեղ և տվեցին իրենց սիրտը Քրիստոսին: Ո՛հ, Աստված իմ, ինչպիսի՜ փոփոխություն:

152 Չէ՞ք ուզում գալ: Արդյո՞ք այնքան մեղք եք գործել, որ ձեր սիրտը սևացել ու խամրել է այնքան, որ անգամ Սուրբ Հոգին չի կարող հպվել դրան: Միգուցե Աղավնին թռչել է հավիտենություն, մեկընդմիշտ հեռացել է:

153 Աստված օրհնի քեզ, անուշիկս: Փոքրիկ աղջիկը մոտենում է: Աստված օրհնի քեզ, անուշիկս: Դուք կասեք. «Այդ փոքրիկ աղջիկը չգիտի»: Ո՛հ այո՛, նա գիտի: Նա պարզապես չի կարդացել այնքան ամսագրեր և հին սիրո պատմություններ, որքան դուք բոլորդ: Ահա թե ինչում է պատճառը՝ նա զգայուն է: Հիսուսն ասաց. «Թո՛ւյլ տվեք մանուկներին, որ գան Ինձ մոտ»:

154 Էլի որևէ մեկը ուզո՞ւմ է գալ, միանալ այս առավոտ: Խորանը բաց է: Եվս մեկ րոպե, մինչ նորից երգում ենք, այնուհետև աղոթք ենք բարձացնելու, մինչ այս զղջացող մեղավորները աղոթում են.

Մեռնող գողը ուրախացավ, տեսնելով,

Այդ Աղբյուրը, որում...(Անշուշտ, ամեն ինչ
վերջացած էր, այդ խեղճի վերջը եկել էր):
Եվ Նրա ոտքերի մոտ, ես մաքրվեցի
մեղքերից...

155 Չէք ուզո՞ւմ հիմա գալ: Միգուցե մոտենան նրանք, ովքեր ավելի լավ գիտեն: Աստվածաշունչն է ասում, որ եթե բարին գիտեք և չեք անում, ձեզ համար ավելին է, քան մեղք: Չէ՞ք ուզում գալ: Դու գիտես, որ սխալ ես: Արի՛ և ծնկի եկ խորանի շուրջ, ասա՛ Աստծուն, որ զղջում ես այն բանի համար, թե ինչպես ես վարվել Նրա հետ: Թող Սուրբ Հոգին վերադառնա և քեզ կրկին հեզ, խոնարհ ու հանդարտ դարձնի: Չե՞ս ուզում գալ: Հիշի՛ր, եթե դու մահանաս, իսկ Նա լքած լինի քեզ, ոչ ոք չի լինի այնտեղ քեզ պաշտպանող: Նա ուզում է, որ դու այսօր կանգնես Նրա համար: Աստված օրհնի քեզ, եղբայրս:

156 Սպասում ենք: Մի՞թե եկեղեցում ընդամենը այս տասնհինգ հոգին են, ովքեր իսկապես զգում են, որ հանդիմանվեցին: Դուք խաղաղ, հեզ ու քաղցր, հանդարտ կյանքով եք ապրե՞լ: Այժմ սա ուղղորդվում է Սուրբ Հոգով: Դուք ներողամի՞տ եք, չունե՞ք թշնամիներ: Ապրում եք անցյալով, մեղավորների քնադատությունից վե՞ր: Հեթանոսների նման չեք ապրո՞ւմ, ուրիշ կյանքո՞վ եք ապրում: Ձեր կյանքը այլ նկարագրո՞վ է: Արդյո՞ք քաղցր Սուրբ Հոգին նստած է քո սրտի գահին՝ մղելով քեզ խաղաղ, հանդարտ և սիրող կյանքով ապրել բոլոր մարդկանց մեջ: Քո հարևանները, բոլորը, ողջ քո շրջապատը գիտի՞, որ դու՝ հեզ, հանդարտ, համեստ, խոնարհ քրիստոնյա ես: Աստծո Աղավնին արդյո՞ք քեզ հետ է: Դու վստա՞հ ես: Սա կարող է լինել քո վերջին հնարավորությունը: Շատ լավ:

157 Այժմ դիմում եմ ձեզ, այստեղ՝ խորանի մոտ գտնվողներիդ, Աստված օրհնի ձեզ: Դուք հիմա ստիպված չեք լինի դատվելու: Սուրբ Հոգին ձեզ դատաստան բերեց: Եվ դուք չփորձեցիք պահել ձեր իրավունքներն, ասելով. «Ո՛հ, ես երկար ժամանակ է քրիստոնյա եմ: Ես կարիք չունեմ գնալ խորանի մոտ»: Ձեզանից ոմանք առաջին անգամ են խորանի մոտ. «Ես կարող եմ մեղավոր մնալ, եթե ուզեմ, դա իմ իրավունքն է»: Այո՛, ճիշտ է: Դու ազատ կամք ունես, կարող ես վարվել այնպես, ինչպես ուզում ես: Բայց դուք այս առավոտ հրաժարվեցիք ձեր իրավունքներից: Ասում եք. «Ի՞նչ կասեն մարդիկ, ես դավանում եմ քրիստոնեությունը, իսկ հետո գնում եմ

խորանի մոտ, ի՞նչ են նրանք ասելու»: Բայց ի՞նչ է ասում Աստված: Նա ձեզ ասաց, որ գաք, և դուք դա արեցիք: Դուք հիմա հրաժարվեցիք ձեր իրավունքներից, եկաք որ հեզ Հոգին գրավի Իր տեղը ձեր սրտում այսօր: Ես գիտեմ, որ Նա կանի դա: Ես գիտեմ, որ Նա կանի: Նա խոստացել է, որ կանի: Նա ուղղակի չի կարող, չի կարող չգալ: Նա խնդրում է, լաց է լինում, փափագում է և նման բաներ գալ այստեղ, Նա ուզում է գալ քեզ մոտ:

158 Եվ մահվան ժամին, երբ մահվան հրեշտակը նստի մահճակալի եզրին, թաքստոցին նայելու փոխարեն, իմանալով, որ մի օր մերժել ես գալ, իսկ հետո քո հոգին սև ու զազրելի է դարձել, այլևս ժամանակ չի լինի, կապ չունի, թե որքան դառնապես ես լաց լինելու: Եսավը չգնահատեց իր երջանկությունը…այսինքն շնորհքի իր օրը, և հնարավորությունից չօգտվեց: Նա դառնորեն լաց եղավ, փորձելով շտկել այն, բայց չկարողացավ: Աստված նրան կանչեց վերջին անգամ:

159 Բայց դուք այս առավոտ հրաժարվում եք ձեր բոլոր իրավունքներից, բոլոր ընկերներից, բոլոր հույզերից և ամեն բանից, որ գաք այստեղ: Դուք հրաժարվեցիք ձեր իրավունքներից, ծունկի եկաք և զրուցում եք Աստծո հետ: Ես ձեզ ասում եմ Տիրոջ Խոսքով, որ Քրիստոսն է ասել. «Ինձ մոտ եկողին Ես դուրս չեմ հանի»: Այժմ, մինչ այնտեղ՝ խորանի մոտ եք, ապաշխարե՛ք, ասեք Նրան, որ զղջում եք ձեր արածների համար:

160 Ահա թե ինչումն է խնդիրը, որ մարդիկ մկրտվելիս չեն ստանում Սուրբ Հոգին, որովհետև լիովին չեն ապաշխարում: Աստված ջանում է նրանց տալ Սուրբ Հոգին: Նա ուզում է, որ դու հեզ, խոնարհ և հանդարտ լինես: Այդ է պատճառը, որ դու վեր ես կենում այդ նույն եսասիրությամբ քո սրտում: Ո՜հ, դու կարող է վեր կենաս աղաղակելով, լեզուներով խոսելով կամ էլի ինչ–որ բան, բայց դա ցույց չի տալիս, որ դու ունես Սուրբ Հոգին: Դու այնտեղից պետք է բարձրանաս ուրիշ մարդ դարձած: Դու պետք է քաղցր, հանդարտ, հեզ ու խոնարհ վեր կենաս այստեղից և Աստծո Հոգին քեզ հետ բնակություն հաստատած: Հաջորդ տարի հետ նայելով այս հետքերին, և տեսնելով, որքան եք անցել արդեն, կտեսնեք, որ դուք անընդհատ առաջ եք շարժվում: Դա է Սուրբ Հոգին: Սուրբ Հոգին սեր, ուրախություն, խաղաղություն, ժուժշկալություն, հեզություն, քաղցրություն, երկայնմտություն, հավատարմություն

է: Այժմ պարզապես ապաշխարե՛ք և ասեք Աստծուն, որ հենց հիմա ուզում եք դա: Նա…Նա կտա դա:

161 Փորիկ աղջի՛կ, դու, որ այնտեղ ես, անուշիկս, դու էլ նույնն արա՛: Օրհնում եմ քեզ: Քո մայրը ձեռքերը քեզ վրա պահած կանգնած է:

162 Այս սիրելի, տարեց սևամորթ քույրիկը, որ այստեղ խոնարհվել է խորանի մոտ: Ձեզ, հավանաբար, վիճակված է եղել ուտել եգիպտացորենով բլիթներ և վարսակ, վիճակված է եղել ապրել դրսի նրբանցքներում, քույրիկ, որքանով ես գիտեմ: Աստված օրհնի ձեր սիրտը, այս առավոտ Փառքի մեջ պալատ է պատրաստված ձեզ համար: Ճիշտ է:

163 Նայե՛ք այս ճերմակ մազերով տիկնոջը, ով այստեղ է, խոնարհված գլխով երիտասարդ կնոջը, ճերմակած մազերով կնոջը: Ո՛վ Աստված: Տեսե՛ք ծնկի եկած տղամարդուն, որքան տարբեր մարդիկ կան: Պարզապես ապաշխարե՛ք, ասե՛ք Նրան, որ զղջում եք: Ասեք, որ այլևս չեք անելու դա: Իր շնորհքով դուք այսօրվանից ձեր բոլոր տարաձայնությունները կկարգավորեք: Դու ուզում ես ես հեզ ու հանդարտ լինել: Ուզում ես խոնարհ լինել և գնալ ուր, որ Նա տանի քեզ:

164 Երբ մարդիկ մի բան են ասում, կարևոր չէ, թե որքան ճիշտ է դա թվում, դու կթողնես հարևանի մասին խոսելու քո իրավունքները: Դու կխոսես, կպատմես Հիսուսի մասին: Դու կանես այն, ինչ ճիշտ է: Դու մարդկանց մոտ մարդասպանի նման չես նայվի: Դու մարդկանց մոտ ելույթ չես ունենա և զրպարտես անմեղին: Բայց դու տեսնում ես իսկական քրիստոնյաների այդ խիզախ հերոսական դրսևորումը և ուզում ես լինել նրանց նման: Կարիք չի լինի, որ բոլորին ասես, որ քրիստոնյա ես, եթե այդպիսին ես, քո խոսելաձևից նրանք դա պարզապես կտեսնեն և կհասկանան: Դու դրսից և ներսից կնքված ես:

165 Այժմ, մինչ հնազանդության եք բերում ձեր սիրտը, ապաշխարե՛ք հիմա: Ասե՛ք Աստծուն, որ զղջում եք, որ դա այլևս չի կրկնվի, որ ամաչում եք, թե ինչպես եք վարվել: Այնուհետև ես կաղոթեմ ձեզ համար: Եվ ես հավատում եմ, որ հենց այդ ժամանակ խաղաղությունը կհաստատվի ձեր սրտում, խաղաղությունն ուղղակի գետի նման կհոսի քո հոգու մեջ: Դու գուցե չաղաղակես, գուցե չխոսես լեզուներով, գուցե չցատկես, բայց դու խորանից կհեռանաս Մի Բանով քո սրտում, Մի Բան քո

մեջ, ինչը խարսխելու է քեզ հին խաչին, քանի դեռ ապրում ես: Այժմ աղոթեք այնպես, ինչպես ես: Խոստովանե՛ք:

166 Մեր երկնայի՛ն Հայր: Անարժան արարածներ այս շոգ, տոթ սենյակում այս առավոտ, ինչպես արկղի մեջ. բայց, ո՛վ Աստված, Դու ես դա դուրս մղել մեզանից: Սուրբ Հոգին իջավ, համոզեց մարդկանց, որ նրանք սխալ են եղել: Նրանք մեղանչում էին: Նրանց հոգին անբարտավան էր: Նրանք թշնամացած էին դարձել, քթներն ուրիշի գործերի մեջ խոթող, ամենագետ, չէին ցանկանում ապաշպարել, չէին ցանկանում ներել մարդկանց, ովքեր իրենց դեմ բաներ էին արել: Նրանք ցանկություն չունեին դա անելու, բայց այսօր Սուրբ Հոգին վերցրեց Աստծո Խոսքը դրեց Այն ուղիղ նրանց հեզ սրտերում, և ասաց. «Այժմ ուզո՞ւմ ես վերադառնալ այնտեղ, որտեղ առաջին անգամ եկար, խորանի մոտ, վերադարձար այնտեղ, որտեղ սիրում էիր բոլորին, սիրում էիր Ինձ անմար սիրով: Այդ դեպքում պարզապես վեր կաց և մոտեցիր խորանին»: Նրանք դա արեցին, Տե՛ր:

167 Ես հիմա աղոթում եմ, որ Դու սրբացնես նրանց մտքերը, Տե՛ր, սրբացնես նրանց սրտերը, և հեզ ու խողաղ դարձնես նրանց: Թող նրանք հիմա բարձրանան այս խորանից՝ ապաշխարելուց հետո, իրենց կյանքերը Քեզ հանձնած, վերադառնան իրենց տները: Կարևոր չէ, թե ինչ է կատարվում, թե արդյոք ամուսինը կվշտացնի, կինը կվշտացնի, հարևանը կվշտացնի կամ ինչ-որ մեկը, որի հետ աշխատում կամ շփվում եք: «Ես պարզապես աղավնու նման հեզ կլինեմ»:

168 Ի վերջո վրեժխնդրությունը Քոնն է, «Ե՛ս պիտի հատուցեմ»,—ասում է Տերը: Մենք տեսանք, որ դա այդպես է, Տե՛ր: Պարզապես հանգիստ կանգնիր, հեզ եղիր, տե՛ս, թե Աստված ինչպես է վերցնելու…անմիջապես ինջնելու Իր գառնուկի մոտ: Անշուշտ, անկասկած: Այս բարի Հովիվն Իր կյանքը տալիս է նրանց համար, Նա գալիս է Իր ոչխարների մոտ: Եվ Նա կառաջնորդի նրանց: Վա՜յ նրան, ով կխոչընդոտի նրանց, վա՜յ նրան, ով մի բառ կասի նրանց դեմ: Ասվում է. «Ավելի լավ կլիներ, որ ձեր վզից մի ջրաղացի քար կախվեր և ծովի խորքը նետվեին: Նրանց հրեշտակները միշտ տեսնում են Իմ Հոր երեսը, որ Երկնքում է»: Հասկանո՞ւմ եք: Ո՛վ Աստված, մենք ուզում ենք…«Ինչ անում եք նրանց՝ Ինձ եք անում»:

169 Ուստի, ո՛վ Աստված, ես ուզում եմ լինել հեզ: Ես էլ եմ ինձ դնում զոհասեղանի վրա այս առավոտ, ոչ միայն այս

առավոտ, այլ ամեն առավոտ և ամեն օր։ Ես ուզում եմ լինել հանդարտ և հեզ, և Հիսուսի նման։ Ծնորհի՛ր այդ, Հա՛յր։ Օգնի՛ր մեզ հիմա լինել այդպիսին, թող հսկայական սիրո ալիքները հեղեղվեն մեր հոգիներով։

Խաղաղությո՜ւն, խաղաղությո՜ւն, հրաշալի խաղաղություն,
Որ իջնում է Երկնայից Հորից, (Չեք զգո՞ւմ, որ դա հիմա ձեր սրտում է)։
…հավերժ հոգուս վրա, (Ալելո՜ւիա, ալելո՜ւիա)…

Խաղաղությո՜ւն, խաղաղությո՜ւն, հրաշալի…

170 Քույր Գերտին խնդրեց փոխանցել ողջ եկեղեցուն, որ նա էլ է հանդիմանվել, բայց նա դաշնամուրն է դարձնում իր խորանը։ Քանի որ խորանը, դաշնամուրն է իր խորանը, նա ասաց. «Ասա՛ եկեղեցուն, որ աղոթի ինձ համար,— մինչ նա նստած է այնտեղ և արցունքները հոսում են նրա ակնոցների տակից։ Այս ամբիոնն է իմ խորանը։ Ես էլ ապաշխարեցի, իմ Աստվածաշունչը թոջվել է։ Ո՛վ Աստված։

Խաղաղությո՜ւն։ (Աստծո խաղաղությունը),
Որ իջնում է Երկանյին Հորից, (Ո՛հ, ալելո՜ւիա),
…հավերժ իմ հոգու վրա…

171 Ո՛վ Աստված, եթե ես ինչ–որ մեկի կամ Քո դեմ մեղք եմ գործել, հեռացրո՛ւ դա, Տե՛ր։ Հեռացրո՛ւ մեղքը իմ այս փոքրիկ եկեղեցուց այսօր։

172 Ձեզանից քանի՞սն են զգում, որ Աստված ներեց իրեն և Խաղաղության Աղավնին կրկին նստած է նրա սրտի վրա։ Նա հենց հիմա հետ թռավ և գրավեց Իր տեղը։ Սուրբ Հոգին հենց նոր վերադարձավ և ասաց. «Զավա՛կս, ես միշտ ցանկացել եմ սիրել քեզ, ուղղակի դու չէիր թողնում, որ Ես դա անեմ։ Ես չեմ կարող բնակվել քո հին եսասեր հոգու հետ։ Բայց հիմա երբ դու թողեցիր դա, ես վերադարձա քո սրտի մեջ այսօր»։ Ձեզանից քանի՞սն են այդպես զգում։ Թող բարձացնեն իրենց ձեռքը։ Բարձացրե՛ք ձեր ձեռքը, լավ, զոհասեղանի ամբողջ երկայնքով։ Ո՛հ, դա հիանալի է։ Եկեղեցում քանի՞սն են այդպես զգում։ Բարձացրե՛ք ձեր ձեռքը։ Ո՛հ։ *(Լինել Հիսուսի նման)։*

173 Մեր Երկնավոր Հայր, մենք շնորհակալ ենք Քեզանից այս քնքուշ օծության համար, կարծես վերցնես խնձորը, սեղմես և ճզմես այնքան, մինչև չդառնա փափուկ, այնպես փափուկ, որ փոքրիկ երեխան կարողանա կծի և ուտի այն: Ահա այդպիսին ենք ուզում, որ մեր սրտերը լինեն, Տե՛ր: Վերցրո՛ւ այն մեխերով խոցված Քո ձեռքի մեջ, ճզմիր, ասելով. «Զավա՛կ, մի՞թե չես տեսնում, որ դու ցավ էիր պատճառում Ինձ: Դու ինձ ցավ էիր պատճառում, երբ բորբոքվում, կորցնում էիր համբերությունդ: Դու ինձ ցավ էիր պատճառում, ո՜հ, Իմ սիրտն արյունոտվում էր քեզ համար, զավա՛կ, երբ տեսնում էի քեզ *այս բանը, այն բանը* անելիս: Բայց հիմա երբ քո սիրտը իմ ձեռքում է, Ես ուզում եմ այն իրոք խոնարհ դարձնել: Ուզում եմ այն այնպիսին դարձնել, որ կարողանամ օգտագործել այն և ապրել նրա մեջ: Ես ուզում եմ այսօր հետ թռչել այդ թառին, ուզում եմ հետ թռչել և բնակվել, Իմ բնակությունը հաստատել քեզ հետ»: Շնորհի՛ր այդ, ո՛վ Աստված: Մենք սիրում ենք Քեզ: Շնորհի՛ր դա Քո Փառքի համար: Խնդրում ենք Հիսուսի Անունով:

Լինել Հիսուսի պես…

Մի՞թե չեք սիրում պարզապես այսպես երկրպագություն անել: Ո՜հ, իմ հոգին ուղակի ողողվում է:

Ես երկրի վրա…

Տեսնել Նրան այսպես երկրկագողների մեջ իջնելիս, ձեր սիրտում զգում եք իսկապես հեզություն: Իմ սիրտը ուղղակի արագ բաբախում է:

…ճանապարհին, Երկրից մինչև փառաց երկինք,
Ես ուզում եմ միայն Նրա պես լինել:

Չէք ուզո՞ւմ բարձացնել ձեր ձեռքը, մինչ մենք երգում ենք այս երգը:

Լինել Հիսուսի պես…

Զոյե՛, չես ուզո՞ւմ առաջ գալ և աղոթել այս առավոտ, եղբա՛յր: Աստված օրհնի քեզ: Տեղ արա քեզ համար այստեղ, խորանի մոտ, եղբար Զոյե: Աստված օրհնի քեզ:

…ճանապարհին, Երկրից մինչև փառաց երկինք,
Ես ուզում եմ միայն Նրա պես լինել:

174 Ես գիտեմ, որ շոգ է, բարեկամներ։ Գիտեմ։ Բայց ես, ես հույս ունեմ, որ դուք ձեզ զգում եք այնպես, ինչպես ես։ Ո՛հ, ինձ այնպես եմ զգում, կարծես կարող եմ թռչել։ Ի՞նչ սեր է Նա։ Ես ի՞նչ կկարողանայի անել։ Ո՞ւր կգնայի։ Ո՛վ Աստված։ Ո՞ւր եմ ես գնում։ Դեպի ո՞ւր եմ գնում։ Ի՞նչ է դա լինելու։ Հարյուր տարի հետո որտե՞ղ եմ լինելու։ Ի՞նչ կլիներ, եթե չունենայի Նրան։ Որտե՞ղ, որտե՞ղ կա ուրիշ ապաստարան։

Բեթլեհեմի մսուրից մի Օտարական եկավ,
Ես երկրի վրա փափագում եմ Նրա պես
լինել,
Կյանքի ողջ ճանապարհին, Երկրից մինչև
փառաց երկինք,
Ես ուզում եմ միայն Նրա պես լինել։

Այժմ բոլորս միասին.

Լինել Հիսուսի պես...(Փա՜ռք Աստծուն։
Այո՛, Տե՛ր։ Այո՛, Տե՛ր։ Ոչ թե նման լինել
աշխարհին, այլ՝ Քեզ)։
...լինել Նրա պես,
Կյանքի ողջ ճանապարհին, Երկրից մինչև
փառաց երկինք,
Ես ուզում եմ միայն...?...

175 Մինչ խոնարհել եք ձեր գլուխները, ուզում եմ մի բան հարցնել ձեզ։ Այստեղ մեկ հոգի կա, որ տրտմեցնում է Սուրբ Հոգուն։ Ինչ-որ մեկը կանչված է եղել։ Ես խոսում եմ Հիսուս Քրիստոսի Անունով՝ որպես Նրա մարգարե։ Զգում եմ, որ Նրա սիրտը խոցվում է։ Դահլիճում ինչ-որ մեկը չի հնազանդվել Նրան, նրանք պետք է գան։ Այժմ ուզո՞ւմ եք գալ։

Կյանքի ողջ ճանապարհին...

Այո, քույրիկ, բայց այնտեղ ավելին են, քան դուք)։

...փառաց երկինք,
Ես ուզում եմ միայն Նրա պես լինել։

Պարզապես Հիսուսի պես լինել...(Դա է իմ
ողջ փափագը՝ խոնարհ, համեստ ու հեզ,
լինել Նրա պես)։
Ես երկրի վրա...

Չե՞ք գա հիմա առաջ։ Աստված ուզում է տեսնել, որ դուք անում եք քայլը, այնտեղ մի քանիսն են։

Կյանքի ողջ...

176 Ես գիտեի, որ դուք կգաք։ Աստված օրհնի ձեզ։ Աստված օրհնի ձեզ։ Աստված օրհնի ձեզ։ Ահա այսպես։ Ահա այսպես։ Ես նայում էի այս դահլիճով մեկ և ամենասարսափելի սև ստվերը, որ երբևէ տեսել եմ, կախված էր այնտեղ։ Սուրբ Հոգին այստեղ է հիմա։ Նա հենց հիմա իմ վրա է։ «Տրտմեցնել Սուրբ Հոգուն»։

Լինել Հիսուսի պես…

177 Ի՞նչ էր անում Նա։ Գնում էր այնտեղ, ուր, որ Հայրը տանում էր։ Աստված օրհնի ձեզ, եղբայր։ Աստված օրհնի ձեզ, եղբայրս։ Լավ է, մոտեցեք և ծնկի եկե՛ք։

Ես երկրի վրա ուզում եմ…

178 Այժմ ժամանակն է խոստովանության, ուղղման և շտկման, ինչպես հին ժամանակներում։ Եկե՛ք։ Զգում եմ, որ այնտեղ դեռ էլի կան։ Աստված օրհնի ձեզ, տիկին։ Աստված օրհնի ձեզ, տիկին։ Աստված օրհնի ձեզ։ Աստված օրհնի ձեզ։ Աստված օրհնի ձեզ։ Այո։ Սուրբ Հոգին միշտ իրավացի է։ Շտապե՛ք։ Այո, մոտեցե՛ք։

…Նրա։

Լինել Հիսուսի պես, լինել Հիսուսի պես,
Ես երկրի վրա…

Ո՛հ, Աստված իմ, այո՛։ Այսպես լցրեք միջանցքները, դուրս եկեք և աղոթեք։

Կյանքի ողջ ճանապարհին, Երկրից մինչև
փառաց երկինք,

Պարզապես ապաշխարեք, ասե՛ք Աստծուն, որ զղջում եք, դա է այն ամենը, ինչ պետք է անեք։

…լինել Նրա պես։

179 Չէ՞ք ուզում գալ հիմա։

Որ…

Ճիշտ է, արտասուքով դուրս թափել, առաջ եկե՛ք։

…լինել…

180 Ի՞նչ եք անելու։ Ո՞վ է կագնելու ձեզ համար, գուցե, այս երեկո։ Ո՞վ է կանգնելու քեզ համար, երբ մահը քաշի քո թևերից։ Կարևոր չէ, թե ինչ ես արել, Սուրբ Հոգին նստած է ուղիղ այնտեղ՝ քո կողքին։ Այդ Նա է ցանկանում, որ դու գաս։

Կյանքի ողջ ճանապարհին, Երկրից մինչև
փառաց երկինք,

181 Պարզապես ապաշխարեք, ասե՛ք. «Ո՛վ Աստված, ես ցավում ես, ես չէի ուզում անել այդ»։ Դու չես կանգնի ինձ համար, եթե ես հիմա չկանգնեմ Քեզ համար։ Իսկ ես ուզում եմ, որ Դու կանգնես ինձ համար, և ես այսօրվանից կկանգնեմ Քեզ համար։ Ես կապրեմ այնպես, ինչպես քրիստոնյան պետք է ապրի։ Ես կփոխեմ իմ ճանապարհները։ Ես կլինեմ հեզ ու հանդարտ։ Թող մարդիկ ինչ ուզում են ասեն։ Ես պարզապես հեզ ու հանդարտ կյանքով կապրեմ Քո առջև»։ Կարևոր չէ, թե որքան ժամանակ է, որ դավանում ես, որ քրիստոնյա ես, թե որ եկեղեցուն ես պատկանում, դա դրա հետ ոչ մի կապ չունի։ Առաջ եկե՛ք։ Աստված օրհնի ձեզ։ Դուրս արի՛, զավա՛կ։

182 Աստված հիմա խոսում է ձեզ հետ։ Եթե հավատում եք, որ ես Նրա ծառան եմ, Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ առավոտյան, ասաց. «Արա՛ այդ կանչը, այնտեղ շատերը կան։ Սա է այն օրը, սա է այն ժամը։ Այնտեղ՝ հետևում դեռ մոտ հինգ–վեց հոգի կա, նրանք, իրոք, պետք է գան հիմա։ Մի՛ մոռացեք, եղբայր, քույր, ես ուղիղ նայում եմ ձեզ և տեսնում եմ այդ սև ստվերները, որոնք կախված են ձեր գլխավերևում։ Ավելի լավ է՝ հիմա գաք։

183 Լինել Հիսո՛ւսի պես։ Մի՞թե չեք ուզում Նրա պես քաղցր, հանդարտ, հեզ ու խոնարհ լինել։ Աստված օրհնի ձեզ, երիտասարդ։ Աստված օրհնի ձեզ հայրիկ երեխայի հետ։ Աստված օրհնի ձեզ, քույրիկ։ Աստված օրհնի ձեզ, մեղավոր բարեկամ։ Այո՛։ Ծարժվե՛ք, քույր, դուրս եկե՛ք, կանգնե՛ք ինչ–որ տեղ։ Աստված օրհնի ձեզ։

184 Սիրելի՛ քույր, կան շատ բաներ, որոնց համար դուք պետք է շնորհակալ լինեք։ Մահճակալին գամված էիք, մահանում էիք, ահա՛ գալիս եք խորանի մոտ։ Աստված օրհնի ձեր քնքուշ սիրտը։

185 Սուրբ Հոգին հիմա կրկին խոսում է։ Ապաշխարություն, պարզապես աղաղակե՛ք Աստծուն, աղոթե՛ք ձեր ձևով։ Դուք եք մեղանչել, դուք էլ հիմա աղոթեք։ Ասե՛ք Աստծուն, որ զղջում եք ձեր արածների համար։ Ուշադրություն մի՛ դարձրեք, թե ով կա ձեր շուրջը։ Պարզապես ասե՛ք. «Ո՛վ Աստված, ների՛ր ինձ, ես չէի ուզում անել այդ։ Ես ուզում եմ լինել հեզ։ Ես, ես երբեք այլևս ճանապարհը չեմ կտրի և չեմ խառնվի»։

186 Ո՛վ Աստված, ո՛հ, ինչպես եմ ես դա սիրում։ Երկնայի՛ն Հայր, որովհետև յուրաքանչյուր զղջացողն այտեղ՝

խորանի մոտ է, ով ծնկի եկած աղոթում է: Ո՛վ Աստված, թող մայրերը, հայրերը, երեխաները, հայրերն ու մայրերը, ով էլ որ լինեն, հարևանները, եկեղեցու անդամները, սարկավագները, պատասխանատուները, ո՛վ Աստված, այս հնաոճ կաղապարման ժամանակում, մինչ նստած ենք այս շոգ սենյակում այս առավոտ, Սուրբ Հոգին իջնում և խոսում է խաղաղությամբ: Ո՛վ Աստված, ես ուզում եմ կանգնել այն օրը և լսել, թե ինչպես ես քաղցրությամբ ասում. «Այո, դու առաջ եկար և կանգնեցիր Ինձ համար, հիմա էլ ես կկանգնեմ քեզ համար»: Ես ուզում եմ, ու Դու այսօր դնես այդ խաղաղությունը այստեղ գտնվող յուրաքանչյուրի սիրտում, ո՛վ Աստված: Հանդարտությամբ և քաղցրությամբ ես ուզում եմ, որ Դու անես դա: Ուզում եմ, որ այնպիսի զգացողություն առաջացնես, որը այսուհետև այլևս երբեք չի թողնի նրանց: Թող տները նորոգվեն: Թող նորոգված մարդիկ դառնան: Թող այսօր ամեն բան նոր լինի, որովհետև այս մարդիկ խոնարհեցրին իրենց: Դու ասացիր. «Եթե իմ Անունով կոչվող մարդիկ խոնարհեցնեն իրենց և աղոթեն, այն ժամանակ ես Երկնքից կլսեմ»: Եվ ես գիտեմ, որ Դու դա լսում ես այս առավոտ, ո՛վ Աստված:

187 Եվ ես խնդրում եմ, որ ներես նրանց, ովքեր մնացին իրենց տեղերում, բայց պետք է եկած լինեին: Ո՛վ Աստված. խոսի՛ր նրանց հետ, և թող նրանք այլևս հանգիստ չունենան երկիր վրա, մինչև, որ այդ որոշումը կայացնեն: Տե՛ր, գալ և հաշտվել Քեզ հետ: Ծնորհի՛ր այդ, Տե՛ր: Օրհնի՛ր հիմա բոլորին: Թող Քո բարությունն ու ողորմությունը միշտ հանգչի յուրաքանչյուր մարդու վրա, ով խոնարհությամբ զղջաց եկեղեցում այս առավոտ:

188 Հա՛յր Աստված, ես դա արեցի Քո թելադրանքով: Ես այդ մարդկանց կանչեցի, նրանք ոտքի ելան: Դու ասացիր. «Ով Ինձ դավանի մարդկանց առջև, Ես էլ կդավանեմ նրան Իմ Հոր և սուրբ հրեշտակների առջև»: Այստեղ գտնվողներից շատերը երկար տարիներ քրիստոնյաներ են եղել, բայց նրանք այս առավոտ կանգնած են իրենց մեղքերը խոստովանելու, որ նրանք սխալ են վարվել: Նրանք անարժան էին դարձել սիրուն: Սուրբ Հոգին հեռացել է նրանցից: Եվ շատ անգամներ նրանք չեն կարող զգալ այդ հեզ, քաղցր, խոնարհ զգացումը, որ պետք է զգային: Նրանցից շատերը մեղավոր են, ովքեր ատաջին անգամ են եկել: Բայց Հա՛յր, նրանք ուզում են այդ հրաշալի զգացմունքը՝ խաղաղությունը,

որ բոլոր հասկացողության սահմաններից դուրս է: Ծնորհ՛ր դա նրանց այսօր, Տե՛ր Աստված, և թող նրանք ամբողջությամբ սիրալիր և Քո Հոգով լեցուն լինեն, երբ նրանք այստեղից կհեռանան՝ իրենց տները վերադարնալու համար, ուրիշ կյանքով ապրեն և ուրիշ մարդ դարձած: Մենք այդ խնդրում ենք Քրիստոսի Անունով:

189 *«Տեղ Աղբյուրի մոտ»:* Շատ լավ, նրանք, ովքեր խորանի մոտ են, վեր կացեք և նայե՛ք Տեր Աստծուն, շրջվեք և սեղմեք ձեր շուրջը գտնվող յուրաքանչյուրի ձեռքը: Ո՛հ, այժմ մենք բոլորս կերգենք, մինչ մի պահ կանգնած ենք, նախքան բժշկության ծառայությունը սկսելը:

Տեղ, տեղ, այո՛, տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար,
Տեղ, տեղ, այո՛, տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար:

Ո՛հ, բոլորս միասին.

...տեղ, այո՛, տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար,
Ո՛հ, տեղ, տեղ, այո՛, տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար,

Ո՛հ, տեղ, տեղ, այո՛, տեղ կա:

190 [Չձայնագրված հատված ձայներիզի վրա: Ծան. Խմբ.]: ...?...հավատը: Հիշում ես, եղբայր, երբ մի անգամ քո, քո կինը կանչեց, որ աղոթեմ քեզ համար: Մտանք սենյակ և Սուրբ Հոգին ինձ ասաց. «Մի՛ վախենա»: Ամեն: Մի՞թե Նա իրական չէ: Հրաշալի՜ է: Փա՜ռք Տիրոջը: Ես ցանկություն եմ զգում հաղթանակ հռչակելու: Լավ:

Եվ Իր Արյունը մաքրում է ավելի սպիտակ...

(Ասելիք ունե՞ս):

(Հիսուսը փրկում է)...?...

191 Շատ լավ, այժմ եղբայր Նեվիլը: Եղբայր Սլոթերն էլ խոսք ունի ասելու:

[Եղբայր Սլոթերն է խոսում: Դադար ժապավենի վրա: Ծան. Խմբ.]:

192 [Եղբայր Նեվիլն ասում է. «Գոհությո՜ւն Տիրոջը: Ամե՛ն: Փա՜ռք Աստծուն: Ես հավատում եմ, որ ամենքը ստացան այս առավոտ»: Ծան. Խմբ.]: Փա՜ռք: Ալելո՜ւիա: Ալելո՜ւիա:

[«Բոլորին թվում է, որ մենք հիմա հավատում ենք Աստծուն: Ալելո՛ւիա: Զգում ենք այս բարի օրնությունն ու օծությունն այստեղ՝ հարթակի վրա, զգում ենք ինչպես Պետրոսը, ով եսասիրության համար չէ, որ...?...երեք տաղավար շինեք և մնանք այստեղ: Ամեն: Սա հրաշալի է: Բորորը ստացան»]:

193 [«Այժմ բոլորդ կանգնե՛ք: Ամեն: Չմոռանաք այս երեկոյի ծառայությունների մասին, ոտնալվայի և հաղորդության ծառայություններ ունենք: (Չգիտե՞ք, կլինեք այստեղ, թե ոչ)»]: Հավանաբար այսօր երեկոյան էլ կլինեմ այստեղ: [«Հավանաբար այսօր երեկոյան կլինեմ այստեղ»]: Այո, որքան գիտեմ, այստեղ կլինեմ, եթե ուրիշ տեղ չկանչեն: [«Ամեն»]:

56-0805 Եկեղեցին և Իր Վիճակը
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org